

342.4  
fL-22

01 MAR 2010

9180

Հ. 42  
22

Համականության պահպանի և տեսչության համար

Փ. Խ. Ե. - Ա. Գ. Է. Տ. 8

Պ Ե Զ Ե

ՍԵՐԵՆԱԴԻԹԻՒՆ

ՀՀ ՀՀ ՀՀ ՀՀ ՀՀ ՀՀ ՀՀ

Թ. ի Ց լ ի ս. (231)

Տպարան «Հերթիւն» ընկ. Մագաթեան փողոց № 5,

1 9 0 7

it would seem possible

210

6.05.2013

300

1395-104

h u.2 b.

342-42 ur  
v-80  

# ԱՀՄԵՍՔՐՈՒԹԻՒՆ

811



$\theta \cdot h \oplus_1 h u$ . (231)

Տպարան «ՀԵՐՄԵՆ» բնկ. Մաղաթեան փողոց № 5.

1907

35. 151

EBS. 20. 01

## Ի՞նչ է ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

1.

Մէկ տարուց աւելի է, որ սահմանադրութիւն խօսքը  
ոմենամեծ ժողովրդականութիւն է վայելում Ռուսաստանում։  
Կր որ էլ գնաք, ինչ շրջանի մէջ էլ մտնէք, թէ գիւղերում  
թէ մանաւանդ քաղաքներում, ամեն տեղ էլ սահմանա-  
դրութեան մասին ու սահմանադրութեան անունից են խօ-  
սում և գրում։ Բայց միթէ շատ վաղուց է, որ սահմանա-  
դրութեան անունը տալն անգամ խստիւ արգելվոծ էր Ռու-  
սաստանում և զրա մասին ամենապարզ խօսակցու-  
թիւնն անգամ բաւական էր, որ մարդիկ կասկածվէին  
առավարութեան կողմից ու անվերջ հալածանքների են-  
թարկվէին։ Ժամանակները փոխվել են հիմա, շատ են փոխ-  
վել, այն աստիճան են փոխվել, որ հիմա ինքը կառավա-  
տութիւնն էլ սահմանադրութեան անունից է խօսում և ա-  
ւեն կերպ աշխատում է հաւատացնել, թէ հէնց սահմանա-  
դրութիւնը պաշտպանելու ու նրան հաստատ հիմքերի վրա  
նելու համար են ստեղծված բոլոր այն «ժամանակաւոր» ու  
սնժամանակ միջնադարեան վայրագութիւնները, որ կոչ-  
ւում են «պատերազմական», «խստացրած» և «ժամանաւորա-  
կէս խստացրած» գրութիւններ ու «զինւորա-դաշտային»  
բատարաններ, և որոնք կոչմարի նման ծանրացել են ամ-  
ուղղ Ռուսաստանի կրծքին ու խեղդում են ամեն մի ազատ  
ունչ։

Այո, ժամանակները այն աստիճանի են փոխվել, որ մի  
անի ամիսներից ի վեր Պարսկաստանի մայրաքաքան էլ  
ալեկոծութեան մէջ ծփում։ Արևելիան գարաւոր անշար-  
ժութեան սովորած ժողովուրդն էլ է վերջապէս զարթել և  
գտում է իրան կաշկանդող բռնապիտական կապանքներից  
սզատվել։ Ամեն մի ինքնուրոյնութիւն, ամեն մի անհատա-

կան ինիցիատիվա խեղդող, ամեն չար ու բարի ճակատա գրին վերագրող, ժողովրդին ֆատալիզմի մէջ թմրեցնո իսլամի զաւակներն էլ են այսօր սահմանադրութեան անու նից խօսում և սահմանադրութիւն պահանջում աշխարհ ամենաերանելիներից երանելի պարսկական միապետից, որը շուարած ու գլուխը կորցրած մի քանի մեծ վեղիրներ պահ տօնանկ արեց և «սահմանադրութեան» մանիքեստներ ստո րագրեց:

Այդ «ժողովրդային յաղթութեան» և «յառաջտգիմա կան» ակտի «Հափազանց ուրախալի» լուրը, տարածվելով աշխարհի բոլոր անկիւնները, մեծ ցնծութիւն պատճառելով միայն Պարսկաստանի հպատակներին, այլ և ամբողջ քաղաքակիրթ երկիրներին, որնք շտապեցին իրանց շնորհաւորութիւններն ու գոհունակութիւնը արտայայտել «սահմանադրական» կարգերի մէջ թեակոմոզ ժողովրդին ու միապետին: Այդպէս հեշտ և էժան գոյով սահմանադրութիւն ձեռք բերելը նոյն իսկ շատ ու շատ ժողովուրդների նաև խանձը շարժեց, սամանաւանդ սախանձը շարժեց Ռուսաստանի ազատագրութեան համար մարտնչողների, որնք տհամու երկու տարի է անթիւ ու անհամար գոհեր են ողջակէզ բերում սահմանադրութեան չաստծուն, բայց և այնպէս գեռ չեն կարողացել իրական ոչինչ ստանալ: Այն ինչ երջանիկ պարսիկները, ընդամենը մի քանի օր, և այն էլ մայրաքար զաքում միայն, շուկան կողակելուց, անզիփական դեսպանատանը «բաստ» մտնելուց և մի քանի հատ մարդկային զոհեր շուալուց յետոյ, իրանց սահմանադրութիւնը ստացան և ամեն ները կատարեցին:

«Թմրած ու յետամեաց սահմապետական Պարսկաստանը արդէն սահմանադրութիւն ունի և նա շատ շուատով կը մը շակվի, իսկ քաղաքակրթված ու զարգացած Ռուսաստանը շապակվում է արեան մէջ այդ նոյն սահմանադրութեան համար ու գեռ չէ կարողանում ստանալ»:

Այդպէս են ասում մարդիկ բարի սախանձով ու զար-

մանքով լցված: Այդ իմաստով խօսեց նաև թէ եւրօպական և թէ ռուսական մամուլը: Այդպէս զրեց դժբաղդաբար և հայկական ու մանաւանդ թբքական մամուլը, որը Պարսկաստանի իրականութեանը աւելի մօտիկ ծանօթ լինելով, աւելի լաւ ճանաչելով նրա կուլտուրական, տնտեսական քաքաքական և սօցիալական դրութիւնը, զարգացման աստիճանը և պատմութիւնը, աւելի լրջութեամբ ու խորը կերպով պիտի վերաբերվէր այդ բոլոր «ազատագրական» շարժումներին և աւելի ճիշտ կերպով պիտի գնահատեր նըրանց, քան այդ արեց Պարսկաստանի իրականութեանն ու պատմութեանը անտեղեակ եւրօպական ու ռուսական մապատմութեանը:

Հէնց զրա համար էլ մենք ցանկանում ենք վերլուծել ու պարզել Ռուսաստանի ու Պարսկաստանի թէ «ազատագրական» շարժումների բնաւորութիւնը և թէ նրանց ձեռք բերած կամ ձեռք բերելիք սահմանադրութեան էութիւնը, ցոյց տալով որ Պարսկաստանի սահմանադրութիւն ասելով, երբէք ըլ պէտք է այդ խօսքը հասկանալ այն մաքով ու իմաստով, ինչպէս որ ընդհանրապէս ընդունված է հասկանալ, երբ խօսք է լինում առասարակ սահմանադրութեան մասին: Պարսկաստանի «ազատագրական» համարվողներկայ ժողովրդային շարժումները և պահանջած սահմանադրութիւնը բոլորովին նոյն առաջադիմական, պրօգրէսիվ պատմական պրօցէսը չեն, ինչ են Ռուսաստանի շարժումներն ու մական պրօցէսը չեն, ինչ եղել են XIX-դ դարին սահմանադրութիւնը, և ինչ եղել են ապահնաջած սահմանադրութիւնը, ունեցած քաղաքակրթ երկիրների գարի ընթացքում տեղի ունեցած քաղաքակրթ երկիրների յեղափոխական շարժումներն ու ձեռք բերված սահմանադրութիւնները: Պարսկաստանի շարժումները, ընդհակարութիւնները: Պարսկաստանի շարժումները, ընդհակա-

Նակալական մի նոր կուռ շղթայ ժողովրդին խեղդելու համար, միայն թէ այս անգամ մի այլ ձևով պատրաստված:

Սյս մեր ասածը առաջին անգամից պարագօքո կարող  
է թւալ, բայց, երբ մենք հիմա քննենք ու վերլուծենք, թէ  
ի՞նչ բան է ընդիմանրապէս սահմանադրութիւնը, ի՞նչումն է  
կայանում նրա էութիւնը, այն ժամանակ, ենթագրում ենք,  
շատ պարզ և հասկանալի կը դառնայ ոչ միայն Պարսկաս-  
տանի մասին մեր ասածը, այլ և շատ ու շատ բան: Այն  
ժամանակ հասկանալի կը դառնայ նաև այն շատ հետաքրքիր  
հարցը, թէ ի՞նչու բոլոր սահմանադրական երկիրները միե-  
նոյն և միատեսակ սահմանադրութիւն չունեն, ինչու դի-  
ցուք Քրանսիական սահմանադրութիւնը տարրերվում է  
գերմանականից, գերմանականը աւստրիականից, աւստրի-  
ականը բուլմանականից և այլն: Եւ ինչու մի երկրի համար  
ասում են, թէ նա աւելի լայն ու ընդարձակ սահմանադրու-  
թիւն ունի, իսկ միւսը աւելի նեղ ու սահմանափակ սահ-  
մանադրութիւն ունի: Սահմանադրութիւնը, նրան պայմա-  
նաւորող հանգամանքներն ու նրա էութիւնը ընդհանրապէս  
քննելուց յետոյ, մեղ համար այլես շատ հեշտ կը լինի ճըշ-  
տութեամբ բնորոշել թէ Ռուսաստանի և թէ Պարսկաստանի  
սահմանադրութիւնները և ըստ արժանոյն գնահատել նրանց,  
երբ նամանաւանդ մի ընդհանուր ակնարկ կը գցենք այդ  
երկու երկրի տնտեսական, բակաքական ու սօցիալական  
իրականութեան վրա:

III.

Արդ՝ ի՞նչ բան է սահմանադրութիւնը, ինչի՞ մէջ է կայանում նրա էութիւնը:

Ընդունված է ասել, որ սահմանագրութիւնը մի երկրի հիմնական օրէնքներն են: Եւ իսկապէս այդպէս էլ է, որովհետեւ նա տարբերվում է միւս ոչ-Նիմնական օրէնքներից այն բանով, որ ամեն տարի կամ նոյնիսկ ամեն ամիս շատ նոր ու նոր օրէնքներ են մշակվում և յայտարարվում մի որեէ պետութեան մէջ, հին օրէնքները միշտ փոփոխութիւնների են ենթարկվում, այս ինչ ամեն տարի և ամեն ժամանակ

չէ կարելի սահմանադրական օրէնքներ մշակել և ոչ էլ կարելի է նրանց յաճախ փոփոխութիւնների ենթարկել: Քացի դրանից, ոչ-սահմանադրական, հասարակ օրէնքները մշակվում ու հրատարակվում են շատ խաղաղ կերպով, առանց աղմուկի ու ցնցումների, այնինչ ամեն մի պետութեան սահմանադրական օրէնքները փոփոխութեան ենթարկելու ժամանակ ամբողջ երկիրը իրարանցումի մէջ է ընկնում, մեծ ժողովրդային շարժումներ են տեղի ունենում և նոյնիսկ գործը արիւնահեղութեան է համում: Եւ հէնց այդ սահմանադրական օրէնքների փոփոխութիւնն է, որ սովորական ոճով կոչվում է յեղափոխութիւն: Քանի որ մի երկրի սահմանադրութիւնը կամ հիմնական օրէնքները փոփոխութեան ենթարկված չեն, դեռ չէ կարելի ասել, թէ այդ երկրում յեղափոխութիւն է տեղի ունեցել, թէկուզ այդտեղ շատ էլ ապստամբական շարժումներ տեղի ունեցած լինեն ու շատ էլ մարդկային զոհեր նահատակված լինեն: Բայց և պատահում է, որ մի որևէ երկրում առանց մի կաթիլ արիւնի էլ յեղափոխութիւն է կատարվում, երբ իշխող կառավարութիւնը, կամ աւելի ճիշտ է ասել՝ իշխող դասակարգը, նախազգալով իր կրելիք պարտութիւնը, շտապում է համաձայնութեան գալ իր հակառակորդ դասակարգերի հետ և, մի քանի էական զիջումներ անելով, համաձայնում է երկրի սահմանադրութիւնը կամ հիմնական օրէնքները փոփոխութիւնների ենթարկել ու այդպիսով ապստամբութեան և ժողովրդային ընդհարումների առաջը առնել:

Այս բոլորը ասելով հանգերձ, ի հարկէ, մենք դեռ ևս  
չը պարզեցինք, թէ ինչ բան է սահմանադրութիւնը: Դա մի  
պետութեան կամ երկրի հիմնական օրէնքներն են ասացինք:  
Շատ լաւ, բայց ինչ են նշանակում հիմնական օրէնքներ,  
ինչնի են նրանք պայմանաւորվում, ունինց են նրանք թե-  
լադրվում, ինչնու նրանք զանազան երկիրներում տարրեր  
են, եթէ օրինակի համար, ինչպէս Փ. Լասան է ասում,  
մի որեւէ երկրում մի այնպիսի անհստատալի հրդեհ պատա-  
հի, որը լափի, ոչնչացնի այդ երկրի բոլոր պետական ար-

իիվներում, դատաստանական հիմնարկութիւններում, գրադարաններում ու գրավաճառանոցներում գանված բոլոր օրէնսդրական գրքերը, հիմնական օրէնքների բոլոր պատճէնները, այդ պարագայում կարող է արգեօք այդ երկրի կառավարութիւնը մի նոր, բայց բոլորովին այլ սահմանադրութիւն կամ հիմնական օրէնքներ խմբագրել ու գործածութեան դնելքան այն, ինչ նա ունէր հրդեհից առաջ: Դիցուք այդպիսի մի հրդեհ պատահած լինի Բուլգարիայում, Աւստրիայում և կամ նոյնիսկ Ֆրանսիայում. կարող են արդեօք այդ երկիրների վարչինները վերցնել ու ընդօրինակել դիցուք անզիւժական կամ մի այլ երկրի սահմանադրութիւնը և ասել ժողովրդին՝ «Եկեք, այսուհետեւ այսպիսի սահմանադրութեամբ կառավարվենք»:

Եթէ մենք իդէալիստական աշխարհահայեցողաւթեամբ մտածող մարդկանց ու դրանց ասածները թարս ու շիտակ կրկնող դաշնակցական թէօրէտիկներին այդպիսի մի հարց տանը, նրանք իսկոյն դրական կերպով կը պատասխանեն, հիմնվելով այն սխալ հայեցակէտի վրա, թէ աշխարհի երեսին ամեն տեսակ չար ու բարի մարդկանց կամքից ու քմահաճոյքից է կափած: Եթէ մարդիկ կամ ժողովրդները դժբաղդ ու թշուառ են, եթէ նրանք վատ կառավարչական ձևեր, վատ քաղաքական ու հասարամական կազմակերպութիւններ ու կարգեր ունեն, այդ միմիայն նրանց մի մասի անհասկացողութեան և միւս մասի չարակամութեան ու կամայական քմահաճոյքի արդիւնք են: Մինչդեռ այդ հնացած հայեցակէտը այժմ այլ ես ոչ մի լուրջ կրիտիկայի չէ դիմանում և սոցիալական գիտութիւնները վաղուց արդէն անհերքելի կերպով ապացուցել են, որ մարդկային պատմութիւնն ու քաղաքական և հասարակական կարգերը ոչ թէ սրա ու նրա քմահաճոյքով են զեկավարվում ու դասաւորվում, այլ նրանք էլ ունեն իրանց յատուկ ու որոշ օրէնքներն ու կանոնները, ինչպիսին ունի, օրինակի համար, կենդանաբանութիւնը կամ ըիմիան:

Եւ ձիշտ այդ օրէնքների ու կանոնների հիման վրա է

որ երբէք չէ կարելի դիցուք ֆրանսիային ստիպել անգլիական կամ գերմանական սահմանադրութեամբ դեկավարվել, ինչպէս և չէ կարելի այս վերջիններում ֆրանսիական կամ մի այլ սահմանադրութիւն ընդունել տալ: Եւ դա պարզութէս այն շատ հասարակ պատճառով, որ մարդիկ մի երկրի կամ պետութեան հիմնական օրէնքները կամ սահմանադրութիւնը ոչ թէ օդի միջից են վերցնում, կամ իրանց դրութիւնը ոչ թէ օդի միջից են վերցնում և կամ պարզապէս վերցնում ու իրանց ուզած, կամ պատահած պատճենից ընդօրինակում: Այդպէս մտածել, կը նշանակէ ոչ մի հասկացութիւն չունենալ թէ սահմանադրութեան և թէ առհասարակ պութիւն չունենալ մեխանիզմի մասին, որով ընթանում է պետութիւնների քաղաքական կեանքը, և որը քաղաքական բոլոր սիստէմների, եթէ կարելի է այսպէս ասել, ամբողջ աստանն է կազմում:

Քաղաքական կազմի այդ մեխանիզմը կամ աստանը մի երկրի կամ պետութեան մէջ գոյութիւն ունեցող իրական (րէալ) լուծերի ու նրանց միմիանց մէջ եղած յարաբերութիւններն են: Այդ իրական ոյժերը բոլորովին բնական կերպով զարգանալով կեանքի մէջ, նոյնպէս շատ բնական կերպով ստեղծվում են նրանց մէջ և որոշ փոխադարձ յարաբերութիւններ, այսինքն՝ այդ ոյժերից իւրաքանչիւրը, կեանքի կամ պետութեան մէջ իր արդէն ունեցած զօրութեան համաձայն, բնական կերպով ձեռք է ըերում և որոշ իրաւունքներ ու պարտաւորութիւններ: Ոհա, հէնց այդ պետութիւնն մէջ արդէն գոյութիւն ունեցող՝ իրական ոյժերն ու նրանց յարաբերութիւններն են աչքի տուած առնվում միշտ, երբ մարդիկ զրաւոր սահմանադրութիւն են մշակում մի երկրի համար:

Հէնց այդ պատճառով էլ գիտութեան մէջ ընդունված է ասել, որ մի երկրի սահմանադրութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այդ երկրում գոյութիւն ունեցող իրական ոյժերի միմեաց հետ ունեցած յարաբերութիւնների արտայատութիւնը նրա համար էլ սահմանադրութիւնը կոչվում է հիմ-

նական կրէնքներ, որ նա հիմնված ու կառուցված է պատճառ կեանքի մէջ գոյութիւն ունեցող իրական ոյժերի վրա: Եւ որովհետեւ այդ ոյժերը երբէք մնայուն ու մշտչենական չեն, այլ ընդհակառակը նրանք միշտ փոխվում, զարդանում և այլ ու այլ դասաւորութիւններ են ստանում, այդ պատճառով էլ միշտ հարկ ու կարեռութիւն է զգացվում գրաւոր սահմանադրութիւնն էլ փոփոխութեան ենթարկել այն ձևով, որ սա ճիշտ համապատասխան լինի փոփոխված նոր իրական ոյժերին ու նրանց մէջ գոյացած նոր յարաբերութիւններին: Իսկ քանի դեռ այդ ոյժերը ու նրանց յարաբերութիւնները կեանքի մէջ դեռ փոխված ու այլ կերպարանք, այլ դասաւորութիւն ստացած չեն, քանի դեռ նըրանց յարաբերութիւնները մնում են նոյնը, սահմանադրութիւնն էլ չէ կարող փոխվել և չէ կարող ուրիշ կերպ լինել քան նա և եապէս: Իսկ այդ ոյժերի և դրանց յարաբերութիւնների փոխվելով, եղած սահմանադրութիւնը, կամ, աւելի ճիշտ կը լինի ասել, բղրի վրա գրված հիմնական օրէնքները, այլ ևս անհամապատասխան դառնալով իրական կեանքին, մի տեսակ անօմակեան հակասութիւնն է ստեղծվում պետութեան մէջ, որի պատճառով ահազին ցնցումներ, ժողովրդային շարժումներ ու ապստամբութիւններ են առաջանում, որոնց միակ նպատակը լինում է այն, որ թղթի վրա եղած սահմանադես թիւնն էլ փոփոխութեան ենթարկվի և կրկին համապատասխանութեան մէջ գրվի կեանքի մէջ արդէն փոփոխված իրական ոյժերի ու նրանց յարաբերութիւնների հետ: Այլ խօսքերով, մի երկրի յեղափոխութիւնը նախքան սուր կերպարանք ստանալը, շատ դանդաղ կերպով, ստանեակ և աւելի տարիների ընթացքում կատարվում է ներսից, կեանքի մէջ, և ապա միայն հրաբուխի ձևով նա գուրս է ժայթքում ու հրամալողական եղանակով պահանջում է իրան օրինական սահնկցիա տալ. գրաւոր օրէնքների՝ սահմանադրութեան վերածել:

Ինչպէս որ ձուի մէջ եղած սազմը զարգանալով և թռչուն գոյանալով կոտրում է իրան դեռ երէկ վտանգից

պատսպարող, իսկ այսօր մահ սպառնացող կեղեւ և լոյս աշխարհ է դուրս գալիս, այնպէս էլ պետութեան մէջ անցեալներում սազմի մէջ եղած ու անկենդան հասարակական ոյժերը, հետզհետէ զարգանալով ու զօրութիւն ստանալով, իրանց համար աճելու և աւելի ևս փարթամանալու նոր պայմաններ, նոր հիմնական օրէնքներ են պահանջմով: Եւ այդ օրէնքները, այդ սահմանադրական օրէնքները պէտք է բոլորովին համապատասխան ու ներգաշնակ լինեն զարգացած ու նոր առաջ եկած հասարակական ոյժերին, այլապէս նրանք չեն կարողանայ իրանց յետագայ զարգացման համար նորմալ ընթաց ստանալ: Եւ պետութիւնը չի կարողանայ իր խաղաղ էվոլիւցիայի շրջանի մէջ մտնել, մինչև որ երկրի հիմնական օրէնքները համապատասխան չը դառնան իր մէջ արդէն գոյութիւն ստացած իրական ոյժերին ու դրանց իրական յարաբերութիւններին: Ինչպէս որ աճող և մեծացող օձը իրաքանչիւր տարի իր հին փոքրիկ շապիկը պատռում, վայր է գցում և իր հասակի համաձայն նոր շապիկ է հագնում, այնպէս էլ իրաքանչիւր պետութիւն իր ներքին իրական ոյժերին համապատասխանող հիմնական օրէնքներ, սահմանադրութիւն պիտի ունենայ անպատճառ: Եւ որովհետեւ ամեն մի երկրի կամ պետութեան մէջ եղած իրական ոյժերը միատեսակ, նոյն չափով ու նոյն աստիճանի զարգացած չեն և նոյն յարաբերութիւնները չունեն, ուստի և նրանց սահմանադրութիւնը, հիմնական օրէնքներն ուստի և ներքին սահմանադրութիւնը, միայն այդ պատճառով է, որ չէ կարելի դիցուք գերմանական սահմանադրութիւնը ֆրանսիայի վզին փաթթել, անգլիականը Գերմանիայի վզին և այլն:

Բայց ինչումն են կայանում երկրի իրական ոյժերը ու նրանց յարաբերութիւնները: Որո՞նք են նրանց պայմանաւորող հանգամանքները:

Պարզենք այդ հարցն էլ մի քանի օրինակներով:

III.

Պետութեան մէջ գոյութիւն ունեցող իրական ոյժեր ու

նրանց յարաբերութիւններ ասելով, ալէտը է հասկանալ ժողովրդի զանազան դասակարգերի նիւթական, փիզիքական և բարոյական ոյժերը ու դրանց համաձայն դասակարգերի միեւնաց մէջ ունեցան յարաբերութիւնները: ) ինչպէս որ մի արհեստանոցում, առևտրական տան կամ արդիւնագործական և ֆինանսական հիմնարկութիւնների մէջ աշխատող բոլոր մարդիկ զանազան կատեգորիանների են բաժանվում ու նրանցից իւրաքանչիւրի համար, համաձայն իր նիւթական կարողութեան, կատարած աշխատանքի և մտաւոր հասունութեան, որոշ իրաւունքներ ու պարտաւորութիւններ են ահմանգում, այսպէս էլ պետութեան մէջ է կատարվում ժողովրդի զանազան դասակարգերի վերաբերեալ:

Ետա նին ժամանակներում, երբ մեր նախահայրերը այժմեան վայրենի ցեղերի գրութեան մէջ էին և նրանց նման միայն անտառի պտուղներով, որսով ու ձկներով էին ապրում, նրանց մէջ չը կային, ի հարէ, ոչ դասակարգային բաժանումներ և ոչ էլ իրաւունքների ու պարտականութիւնների ահմաններ: Այն ժամանակ մարդիկ, թէ այր և թէ կին, համահաւասար իրաւունքներ ունէին) ու ընդհանուր խորհրդակցութեամբ էին որոշում իրանց ցեղին վերաբերեալ այս ու այն գործերը:

Սակայն կեանքը զարգանում է, մարդիկ ապրուստի ուրիշ միջոցներ են գտնում, ծանօթանում են երկրագործութեան հետ, հետզետէ արհեստներն են առաջ զալիս) և զըրանց շնորհով ծագում են կեանին նոր ու նոր պայմաններ. իրերի շատ բնական ընթացքով ցեղի կամ ժողովրդի մէջ աշխատանքի բաժանում է առաջ զալիս: Ժողովրդի մի մասը կապվում է հողի հետ և միշտ երկրագործութեամբ է պարապում, միւս մասը արհեստներով, մի երրորդ մասը զինուրական ու պատերազմական արուեստով, իսկ մի մասն էլ կրօնական պաշտամունքներ կատարելով:

Այդպիսով, իրերի բոլորովին բնական ընթացքի շնորհով երկրի մէջ առաջ են զալիս իրական այնպիսի ոյժեր, որոնք միջոց են տալիս այդ ոյժերի հետ զուգընթացարար

զարգացած դասակարգերից մի քանիսին հետզհետէ իշխող ների հրամայողների գերակշռող դեր ստանալ միւս դասակարգերի գերաբերեալ: ) եւ այդ եղանակով կազմակերպված իշխող դասակարգերը, միմեանց հետ միացնելով՝ որը իր նիւթական, որը փիզիքական—զինուրական և որն էլ իր բարոյական-կրօնական ոյժերը, կատարեալ տէր ու տնօրինողն են դառնուում պետական բոլոր գործերի, իրանց ձեռքը հաւաքելով պետութեան բոլոր վարչական գործերը, ամբողջ ժողովրդի վերաբերեալ:

Զը նայելով, որ իշխող դասակարգերը ժողովրդի միւս մասի համեմատութեամբ, միշտ շատ փոքրաթիւ են լինում, այնպէս և շնորհիւ այդ վերջնների չափացանց տղիքայց և այնպէս, շնորհիւ այդ վերջնների չափացանց տղիքայց և կրօնավախութեան, միշտ շատ հեշտ է լիտուում նրանց հասազնդութեան և հպատակութեան մէջ պահնել: Եւ իշխողները, ի հարկէ, օգտվելով այդ իրանց համար իսկստ նպաստաւոր հանգամանքից և իրանց ձեռքում եղած իրական ոյժերից, միշտ շատ աշխատում են աւելի ու աւելի զըրի պահակներին՝ քաղաքացիական ու մարդկային իրակել «հպատակներին» քաղաքացիական ու մարդկային իրակել «հպատակներին», նրանց վրա աւելի ու աւելի բարձերով սակայն, պետական բոլոր պարտաւորութիւնները:

Ահա հէնց այդ, զանազան դասակարգերի միջև, իրանց ունեցած նիւթական, փիզիքական ու բարոյական ոյժերի համաձայն, ստեղծված յարաբերութիւնները, նրանցից իւրաքանչիւրին, իր ոյժերի համաձայն, յատկացված իրարանշիւրին, իրեւունքներն և պարտաւորութիւններն են կազմում երկրի ու քաղաքական պահակներին իրական սահմանադրութիւնը, նրա հիմնական օրէնքները, որ և զրի են առնվում ու այդպիսով կազմվում է պետութեան զրաւոր սահմանադրութիւնը:

Խնդրի վրա այս կերպ նայելով, մենք պիտի ասենք, որ սահմանադրական երկիր կամ պետութիւն պիտի անուանենք ոչ միայն այն բոլոր երկրները, որոնք իրանց օրէնքական գրքերի մէջ արձանագրած սահմանադրական օրէնքներ ունեն, այլև այն բոլոր երկրները, որտեղ այդպիսի գրաւոր հիմնական օրէնքներ՝ սահմանադրութիւն գո-

յութիւն չունի, ինչպէս օրինակ՝ Ռուսաստանը, Պարսկաստանը և այլ յետամաց երկրներ: Եւ յիրաւի, միթէ, օրինակի համար, հէնց Ռուսաստանում մինչև աղատագրական շարժումների առաջ դալը,—շարժումներ, որոնք մինչև օրս, կարելի է ասել, դեռ և ոչ մի փոփոխութիւն առաջ չեն բերել իրերի դրութեան մէջ,—պարզ և որոշ չէն ժողովրդի զանազան դասակարգերի ունեցած իրաւունքների ու պարտաւորութիւնների սահմանները: Միթէ այս վերջին մօտ երկու տարվան կատաղի կոիւներն ու յեղափոխական շարժումները հէնց այդ իրաւական սահմանները փոփոխութիւնների ենթարկելու համար չեն: Սովորութիւն է դառել ասելու, թէ Ռուսաստանը ցանկանում է սահմանադրութիւն ձեռք բերել, մինչդեռ դա բոլորովին սխալ է, որովհետև չէ եղել ու չը կայ մի կաղմակերպված պետութիւն, որը իր, թէն ոչ զրաւոր, բայց իրավան սահմանադրութիւն չունենայ: Նա կարող է վատ լինել, ժողովրդի մեծամասնութեան համար չափազանց աննպաստ, նրան ամեն իրաւունքներից զրկող, իսկ իշխող փոքրամասնութեանը անսահման բռնապետական իրաւունքներ տւող լինել, բայց և այնպէս նա կայ և գոյութիւն ունի, որովհետև երկրի մէջ գոյութիւն ունեն իրական ոյժերը ու զրանց համաձայն զանազան դակարգերի միմեանց մէջ ստեղծված յարաբերութիւնները:

Սակայն, խնդիրը նրանումն է, որ այդ իրական ոյժերը ու նրանց դասաւորութիւնը յաւետենական չեն երբէք: Ժամանակի ընթացքում, դարձեալ կեանքի զանազան պայմանների ու հանգամանքների զարդացման շնորհավ, նրանք այլ դասաւորութիւն ստանում: Իսկ այդ հանգամանքը նոյնպէս շատ քնական կերպով փոփոխութիւնների է ենթարկվում և դիշտ այդ ժամանակի է, որ պետութեան մէջ պահանջ է զգացվում նոյնպէս փոփոխութիւնների ենթարկել իրամանները և պարտաւորութիւնների այն իրաւական սահմանները կամ դասաւորութիւնը, որ գոյութիւն ունէին:

Նախկին իրական ոյժերի ու զբանց համաձայն ստեղծված յարաբերութիւնների օրով:

Հէնց այդ ժամանակի է, ինչպէս ասացինք, որ բաղկումն է առաջ գալիս զանազան դասակարգերի միջն, որ սովորական լեզուով կոչվում է յեղափոխութիւն: Եւ այդ բաղկումը այնչափ խիստ ու զօրաւոր է լինում, որչափ մի կողմից՝ թոյլ են զարգացած լինում նոր իրական ոյժերը, իսկ միւս կողմից՝ դեռ զօրաւոր և ուժեղ են լինում հին իրական ոյժերը:

Պարզինք մեր այս միտքը մի շատ պարզ օրինակով:

Մենք ասացինք, որ ամեն երկրներում և ամեն ժամանակ սահմանագրութիւն միշտ եղել է, բանի որ նրա մէջ միշտ եղել են որոշ չափով իրական ոյժեր և դրանց համաձայն էլ որոշ յարաբերութիւններ: Իբրև այդ բանի ապացոյց, մենք կարող ենք այստեղ բերել այն պատմական բնորոշ փաստը, որ 1786 թ., այսինքն ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից 3 տարի առաջ, որից յետոյ միայն ֆրանսիան գրաւոր սահմանագրութիւն ունեցաւ, կիւզօվիկոս ԽVI-դը մի յատուկ հրովարտակով վերցրեց գիւղացիներին առանց վարձատրութեան ճանապարհների վրա աշխատեցնելու սովորութիւնը և գրա փոխարէն, ճանապարհները շնելու և կարգի բերելու ծախքերը հոգալու համար, մի առանձին տուրք նշանակեց, որի մի նշանաւոր մասը ազնուականները պիտի վճարէին: Այդ բանը այն ժամանակվայ ֆրանսիայի կատարեալ տէր ու տնօրինող ազնուականներին սաստիկ զարգացման մեջ ուղարկեց և նրանք ահազին ազմուկ բարձրացրին ու ընդդիմացան թագաւորի արած կարգադրութեանը, ասելով. «Ֆրանսիական ժողովրդին մեր ուզածի չափ «կոռ ու բերդառք-ի ենթարկելը մեր երկրի սահմանագրութեան մի մասն է կազմում, որ թագաւորը չէ կարող փոխել»: \*)

Կը նշանակէ, Ֆրանսիան, ինչպէս և բոլոր միւս երկիրները, իրանց յեղափոխութիւնից և գրաւոր սահմանագրութիւնից առաջ էլ մի այլ սահմանագրութիւն ունէին:

\*) Ֆ. Լասալ, «Սահմանագրութեան էութեան մասին»:

Մենք կարող ենք ասել մինչև իսկ, որ ոչ միայն մեծ պետութիւնները, այլ և ամեն մի ընտանիք էլ իր փոքրիկ սահմանադրութիւնը ունի: Եւ մեր միտքը լաւ պարզելու համար, իրեւ օրինակ կը վերցնենք հէնց մեր նահապետական երկրագործ ընտանիքը:

Ո՞վ չը գիտէ մեր գիւղական ընտանիքների, որոնք երբեմն 20, 30 և աւելի անդամներից են բաղկացած լինում, խիստ և շատ կանոնաւոր դիսցիպլինան: Ընտանիքի արդիւնաբերութեան, գրսի բոլոր աշխատանքների գործերը տնօրինողն ու կարգադրովը ընտանիքի հայրն է, իսկ տնային գործերի տնօրինողը մայրն է: Ընտանիքի միւս բոլոր անդամները իրանց մեծերի բոլոր կարգադրութիւնները հնագաղութեամբ լսողն ու ճշտութեամբ կատարողներն են միայն: Հազուագիւտ գէպերում են միայն մեծերը սրանց խորհուրդներին դիմում ու կարծիքները հարցնում: Դիարերի ընթացքում նահապետական ընտանիքի անդամների մէջ մշակված այդ յարաբերութիւնները կարելի է այդ ընտանիքի սահմանադրութիւնը անուանել: Եւ քանի որ նահապետական ընտանիքի տնտեսական-արդիւնաբերական պայմանների մէջ ոչ մի փոփոխութիւն չէ մտել քանի որ ընտանիքը շարունակում է ապրել զատ երկրագործական աշխատանքով, և քանի որ ընտանիքի անդամները նոյն նահապետական հասկացողութիւնների տէր, կղերի և «մեծերի» պղեցութեան ենթարկվող մարդիկն են, ինչ որ է իրանց հայրը և էին իրանց պապերը, և քանի որ, վերջապէս, ամբողջ տան ու հողերի տէրը, ըստ նահապետական կեանքի, սեծը՝ հայրն է համարվում, այդ ընտանեկան սահմանդրութիւնն էլ իր կատարեալ ոյժի մէջ է մնում և եղած ընտանեկան յարաբերութիւններն էլ շատ խաղաղ և անվրդով են անցնում:

Բայց հէնց որ կեանքի պայմանները բարդանում են, ընտանիքի պահանջները մեծանում և, երկրագործական արդարաբերութիւնը անկարող լինելով լիակատար բարարութիւն տալ ընտանիքի պահանջներին, նրա անդամներից



մի քանիսը ստիպված են լինում գրսում աշխատանք և վաստակ վնասուել: Եւ անդամներից մէկը, դիցուք, հէնց գիւղի մէջ խանութ է բաց անում, իսկ միւսը քաղաք է գնում գործարանում աշխատելու և մի երրորդն էլ մի այլ անկախ գործով է զբաղվում, երբ մի խօսքով՝ ընտանիքի անդամներից ամեն մէկը իր ինքնուրոյն աշխատանքի տէրն է զանում և իրան բոլորովին անկախ է զգում նախկին ծնողական խնամակալութիւնից, և երբ նամանաւանդ հէնց այդ հանգամանքի աղեցութեամբ այդ մարդկանց աշխարհահայեցողութիւններն ու մտածելու եղանակն էլ փոխվում են. այլ խօսքերով՝ երբ երկրագործ և նահապետական ընտանիքի նախկին իրական ոյժերը վերանում կամ թուլանում են և նրանց տեղ նոր իրական ոյժեր են առաջ գալիս և նախկինից տարրեր գասաւորութիւն են ստանում, ձիշտ այդ ժամանակ, ասում ենք, հետզետէ խախտվում ու փոխվում են և նախկին նահապետական յարաբերութիւնները, խախտվում ու վերանում է հին դիսցիպլինան:

Այդ ժամանակ ընտանիքի անդամները այլևս դադարում են իրանց ծնողների կամ «մեծերի» հազարնդ կամակատարները լինելուց, թէկուզ իրանց ընտանիքի գործերի վերաբերակը ներանք պահանջում են, որ իրանց կարծիքն էլ լսվի ու կամքն էլ յարգվի այդ գործերի մասին այս կամ կարգադրութիւնը անելու ժամանակ, մի խօսքով՝ նըրանք իրանց համար էլ են որոշ իրաւունքներ պահանջում: Ահա հէնց այդտեղ էլ հնի և նորի այն բաղխումն է առաջանում, որի մասին վերևում ասացինք: Այդ բաղխումի աւելի կամ պակաս խիստ լինելը կախված է լինում, ի հարկէ, այն հանգամանքից, թէ որպիսի չափով են զարգացած նոր իրական ոյժերը ու թուլացած հները: Օրինակի համար, որչափ ինքնուրոյն աշխատանքով պարապող ընտանիքի անդամների վաստակը անհաստատ է և քիչ: և որչափ երկրագործութիւնից ստացվող վաստակը դեռ մեծ է լինում, կամ երկրագործ հօր գործերը լաւ գրութեան մէջ են գտնվում, որի շնորհով դեռ որդիքն են, որ կախումն

ունեն իրանց հօրից, և որչափ, նամանաւանդ, «մեծերի» և «երիտասարդների» մտաւոր զիտակցութիւնն ու աշխարհաճայեցողութիւններն էլ միմեանցից խիստ են տարբերվում, այնչափ էլ այդ բաղխումը խիստ ու ուժգին է լինում: Եւ դա պարզապէս այն հասարակ հիման վրա, որ հին բէժիմը իր մէջ դեռ ես բաւականին ոյժ և զօրութիւն զգալով, հեշտութեամբ չէ համաձայնում տեղի տալ և նոր բէժիմին դիջանել:

Այն բոլորը, ինչ որ հիմա ասացինք և որ կատարվում է փոքր չափերով ու փոքր սահմանների մէջ՝ մի ընտանիքում, նրա անդամների վերաբերեալ, նոյնը կատարվում է մեծ չափերով և մեծ սահմաններով՝ մի պետութեան մէջ, ժողովրդի գանազան գասակարգերի վերաբերեալ:

#### IV

Ճիշտ մեր նկարագրած նահապետական ընտանիքի նըման, միջին գարերում բոլոր եւրօպական երկիրներում արդիւնաբերութեան ամենազլիսաւոր և տիրապետող ճիշլը երկրագործութիւնն էր: Կը նշանակէ՛ երկրի կամ պետութեան ամենամեծ հարստութիւնը հողն էր և նրա մէջ տիրապետող տարրերն էլ նրանք էին, որոնք աւելի շատ հող ունեին, այն է՛ հողատէր ազնւականները, զանազան իշխանները, կոմսները, բարօններն ու բարձր հոգնորականութիւնը: Այս վերջինները, բացի հողերից ու կալուածներից, իրանց ձեռքում ունեին և մի այլ շատ մեծ իրական ոյժ, այն է՛ կրօնաբարոյական ազգեցութիւնը, որը, ի հարկէ, այնչափ աւելի մեծ ու զօրաւոր էր, որչափ «հպատակ» ժողովուրդը աւելի տգէտ ու խաւարամիտ էր:

Երկրի այդ երկու ամենազլիսաւոր՝ անտեսական և բարյական գործօնները իրանց ձեռքում ունենալով, այդ երկու զասակարգերը շատ բնական կերպով երկրի կատարեալ տէրերն էին յայտնվում: Ամբողջ իշխանութիւնը և զօրքը հողատէր ազնւականութեան և կղերի ձեռքին էին գտնվում, որովհետև դրանցից առաջինը նրանց նիւթականապէս պատ-

հողն ու օժանդակողն էր, իսկ երկրորդը կրօնի զէնքով նըրանց ըթացնողն ու հպատակութեան սովորեցնողն էր:

Սակայն ժամանակի ընթացքում հետզհետէ աւելի ու աւելի են զարգանում արհեստները և վաճառականութիւնը: Երկրի սահմանները աւելի ու աւելի ընդարձակվում են, հազորգակցութեան միջոցները կատարելագործվում են: Վաճառականութեան նախկին նահապետական ձեր՝ մթերքները կամ ապրանքները միմեանց հետ փոխանակելու եղանակը փոխվում է և առևտուրը դրամի միջոցով է կատարվում: Վերջապէս առաջ է գալիս խոշոր արդիւնագործութիւնը և մի առանձին զարկ է տալիս կապիտալիզմի զարգանալուն: Այս բոլորի հետ կեանը հետզհետէ աւելի ու աւելի բարգանում է. թէ պետութեան և թէ առանձին մարդկանց պահանջները, գնալով, մեծանում են: Մի կողմից դրամը սկըսում է մեծ նշանակութիւն ստանալ իսկ միւս կողմից հողը կորցնում է իր նախկին գերակշիռ նշանակութիւնը: Այլևս գրամով է, որ կարելի է լինում ձեռք բերել արդիւնագործութեան ստեղծած բոլոր բարիքները, գրամով է նոյնպէս, որ կարելի է լինում զինորական մեծ բանակներ կազմել, կատարելագործված զէնք ու ոազմամթերք ձեռք բերել:

Արդիւնագործութեան, վաճառականութեան և կապիտալիզմի զարգանալով՝ զարգանում և մեծանում են նաև բարյագները: Գիւղական տնտեսապէս քայլայված բնակչութիւնը հետզհետէ թողնում է իր ծննդավայրը և քաղաքներն է թափվում, աշխատանք և ապրուստ գտնելու համար: Իսկ քաղաքային համախմբված կեանքը մասնաւորապէս նպաստում է մարդկանց մտաւորապէս զարգւագուն և կրօնի կապանքներից ապատվելուն:

Այն հանգամանքը, որ երկրագործական արդիւնաբերութեան աջողութիւնն ու անաջողութիւնը գլխաւորաբար բնութեան խաղերից են կախված, ինչպէս օրինակ, կարկուտը, փոթորիկը, երաշտը և այլն, այդ պատճառով էլ զիւղական երկրագործ ժողովուրդը միշտ չափազանց աս-

տւածավախ և կրօնամոլ է լինում, ուստի և սաստիկ հոգեռականութեան աղղեցութեան տակ է գտնվում։ Բայց հէնց որ նա կտրվում է հողից և գալիս քաղաքումն է ապրում, ուր նա մօտիկից ծանօթանում է մարդկային խելքի ու հանձարի հետ, ուր նա տեսնում է, թէ ինչպէս մարդը բնութեան տարերքն անգամ իր նպատակներին է ծառայեցնում և նրանց օգնութեամբ բազմատեսակ արդիւնագործութիւն է ծաղկեցնում, այն ժամանակ նա կամաց կամաց սկսում է թերահաւատութեամբ գերաբերվել իր նախկին հաւատալիքներին և խիստ կրիտիկաբար գերաբերվել «հոգեոր հայրերի» ասածներին։ Այլ խօսքերով՝ թուլանում նսեմանում է և այն մեծ ու գորաւոր իրական ոյժը, որի միջոցով այնչափ հեշտ էր լինում դժբաղդ ժողովրդին իր թշուասութեան հետ հաշտեցնել և նրան շարունակ հպատակութեան մէջ պահել։

Քաղաքային, նամանաւանդ գործարանական կեանքը և մի ո ըիշ շատ կըթիչ նշանակութիւն ունի։ Այդտեղ զանազան տեղերից և նոյնիսկ զանազան աղզութիւններից, բայց և բաղդակից մարդիկ, համագումարվելով և միենոյն կեանքով ու միենոյն թշուասութեան մէջ ապրելով, շատ շուտ հն հասկանում, թէ ինչպէս իրանք միմեանց հետ կապված են միենոյն ընդհանուր շահերով և թէ որչափ մեծ նշանակութիւն ունի համերաշխութեամբ ընդհանուր թշնամու դէմ կուր մղելը։ Այլ խօսքերով՝ այդտեղ զարգանում է և մի այլ իրական ոյժ, այն է՝ զասակարգային շահերի և համերաշխ գործունէութեան գիտակցութիւնը, մի բան, որ միմնացից անջատ ու բաժան բաժան գիւղացիական կեանքի օրով երբէք չէ կարող տեղի ունենալ։

Այսպէս ուրեմն, վերոգրեալ տնտեսական էվոլյուցիայի, արդիւնաբերական եղանակների ու միջոցների փոփոխութեան շնորհով, փոփոխութիւնների են ենթարկվում ու այդ դասաւորութիւն են ստանում երկրի իրական ոյժերն էլ։ Մի կողմից թուլանում և կամ բոլորովին կրցնում են իրանց նշանակութիւնը հողատիրութիւնն ու կրօնական աղ-

դեցութիւնը, իսկ միւս կողմից զօրանում և մեծ նշանակութիւն են ստանում երկրի մէջ դրամը և դասակարգային շահերի գիտակցութիւնը։ Իրական ոյժերի այդ փոփոխութեամբ, ի հարկէ, փոփոխում են և դասակարգերի յարաբերութիւնները։ Մի ժամանակ ոչ մի նշանակութիւն չունեցող և ազնւականութիւնից արհամարդկած բուրժուազիան հետզետէ սկսում է դիրք և արժէք ստանալ, որովհետեւ ամենքն էլ զգում են նրա դրամի զօրութիւնը։ Ամեն մի կարիք զգացված դէպքում, որ ի հարկէ շատ յաճախ է պատահում, թէ կառավարութիւնը և թէ ազնւականութիւնը բուրժուազիայի ոսկու մնաւուկներին են դիմում ու նրանից աջակցութիւն խնդրում։ Մի խօսքով, կապիտալիզմն ու նրա տէր բուրժուազիան է, որ սկսում է պետութեան մէջ իրապէս գերակշխ գեր կատարել։

Իրերի զրութիւնը այդպիսի կերպարանափոխութիւն ստանալով և բուրժուազիայի տնտեսականապէս վերակըռութիւնը հաստատվելով հանդերձ, մի առժամանակ, սակայն, կարծես թէ իներցիայի ոյժով, զնու ազնւականութիւնն է շարունակում քաղաքականապէս պետութեան տէրն ու վարով մնալ։ Կառավարութեան ղեկը նա ամուր իր ձեռքումն է պահում և ամեն կերպ աշխատում է պետութիւնն ու միւս զասակարգերին, նամանաւանդ բուրժուազիային, իր՝ աղաւականութեան օգտին շահագործել։ Պետական բոլոր ծախսերը, բոլոր տուրքերը նա բարձում է բուրժուազիայի և միւս զասակարգերի վրա, իսկ օրէնսդրական և վարչական միւս զասակարգերի վրա, իսկ օրէնսդրական և վարչական բալոր իրաւունքները իրան է վերապահում։ Ճիշտ այնպէս, ինչպէս որ կարծես իրերի գրութեան մէջ ոչ մի փոփոխութիւն տեղի չէ ունեցել. ինչպէս որ նա անում էր այն ժամանակ, երբ ոչ զարգացած կապիտալիզմ կար և ոչ ել գերակշռութիւն ստացած բուրժուազիա։

Ազնւականութեան այդ վարժունքը, որ առաջ, նախկին իրական ոյժերի վրա հիմնված լինելով, շատ ընական էր համարվում, այժմ, այդ իրական ոյժերի փոփոխութեամբ, մի տեսակ անօմալիա է առաջացնում, դա մի վերին

աստիճանի խիստ հակասութիւն և անարդարութիւն է գառանում: Տնտեսապէս գերակըութիւն ստացած բուրժուազիան սկսում է քաղաքական գերակըութիւն էլ պահանջել իր համար: Իսկ ազնւականութիւնը, ի հարկէ, իր դիրքը շատ ձեռնուու համարելով իր համար, ոչ մի զիջողութիւն չէ ցանկանում անել: Եւ ահա հէնց այդ տեղից էլ առաջանուում է այն բաղխումը, որ յեղափոխութիւն է կոչվում և որի ամբողջ էութիւնը նրա մէջ է կայանում, որ բուրժուազիան պահանջում է՝ պետութեան մէջ նոր զարգացած և առաջուց գոյութիւն ունեցող իրական ոյժերի ու նրանց ստացածնոր իրական յարաբերութիւնների համաձայն էլ քաղաքական իրաւունքների ու պարտաւորութիւնների նոր սահմանաւրումն տեղի ունենայ, կամ, ինչպէս սովորաբար առում են, փոփոխութեան ենթարկվեն երկրի կամ պետութեան հիմնական օրէնքները՝ սահմանադրութիւնը:

Եթէ երկրի մէջ կատարվող էվոլիցիայի և իրական ոյժերի փոփոխութիւնների հետ համարեա թէ միաժամանակ և քայլ առ քայլ փոփոխվում է և երկրի սահմանադրութիւնը, այդ ժամանակ թէ գասակարգերի միջն եղած բաղխումները թոյլ կերպարանը են ունենում և թէ նոյնիսկ հարկ չէ լինում սահմանադրութիւնն անպատճառ գրաւոր գարձնել: Այդպէս օրինակ, մինչև ՀՀ-դ դարը եւրոպական կօնտինենուում և ոչ մի տեղ գրաւոր սահմանադրութիւն չը կար: Իսկ Անգլիան մինչեւ այսօր էլ գրաւոր սահմանադրութիւն չունի, չը նայելով որ նա ամբողջ աշխարհի ամենաընդարձակ սահմանադրական երկիրն է համարվում: Գրաւոր սահմանադրութիւնը նորագոյն ժամանակների յատուկ մի բան է, ինչպէս որ նորագոյն ժամանակներին են յատուկ գրաւոր պայմանագրերը, մուրհակները, և այլն:

Երբ կեանքը սաստիկ բարդացել իրական ոյժերի և դասակարգերի թիւը շատացել, և երբ մանաւանդ հին իրական ոյժերի վրա յենվող ազնւականութիւնը, հակառակ իրերի բնական պահանջի, յամառութեամբ աշխատել է քաղաքական դեկը ըստ առաջնին իր ձեռքում պահել ու միւս

դասակարգերին անվերջ շահագործել, կաշկանդելով նոյն իսկ բուրժուազիային այնպիսի օրէնքներով ու կարգերով, որ նա ըլ կարողանայ ազատութեամբ զարգացնել իր արդիւնագործութիւնն ու վաճառականութիւնը, այդ ժամանակ էլ մեր ասած բաղխումը շատ խիստ ու զօրաւոր է եղել, և պէտք է զգացվել, թիւիմացութիւնների, կամայական զեղծութիւնների առիթ չը տալու համար, մի թղթի կտորի վրա արձանագրել իրաքանչիւր դասակարգին յատկացվող բոլոր իրաւունքներին ու պարտաւորութիւնները, կամ դրանց սահմանները:

Այդ բաղխումը վերջանալուց յետոյ, ձեռնարկում են երկրի նախկին սահմանադրութիւնն փոփոխութիւնների ենթարկելու պրոցէսին:

Եյդ պրոցէսը կատարելը այն չափ բարդ ու զժուարին է, որչափ շատ են երկրի մէջ զարգացած նոր իրական ոյժերը, հասունութիւն ստացած նոր դասակարգերը: Կընութիւրը շատ հեշտութեամբ կարելի կը լինէր լուծել, եթէ գէմ գիրը շատ հանգնած լինէին միայն երկու դասակարգերը: Բայց առ գէմ կանգնած լինէին միշտ երբեք այդպէս չէ լինում, այլ լինուած են անպատճառ մի քանի, իրանց շահերով միմեանց բոլորին հակառակ դասակարգերը, որոնցից իրաքանչիւրը, ի հարկէ, ցանկանում և ձգտում է կարելի եղածին չափ իրաւունքներ և նուազ պարտականութիւններ ունենալ: Եւ, ի հարկէ, այդ պարագայում հարկ է լինում ի նկատի առնել իրաքանչիւր դասակարգի յենարան կազմող իրական ոյժը և այդ ոյժի համաձայն էլ կատարել իրաւունքների ու պարագայում սահմանաւորումը. աւելի մեծ իրապարտականութիւնների սահմանաւորումը է աւելի շատ իկան ոյժ ունեցող դասակարգը ստանում է աւելի շատ իկան ոյժ ունեցող դասակարգը սահմանաւորութիւններ, իսկ փոքրագոյն իրական ոյժ ունեցողին բաժին՝ են ընկնում նւազագոյն իրաւունքներ և առաւելագոյն պարտականութիւններ:

Պարզէնք և մատչելի գարձնենք մեր այս ասածը դարձեալ մի օրինակով, որ այս անգամ մենք փոխ ենք առնում Ֆ. Լաստալի «Սահմանադրութեան էութեան մասին»

գրքոյկից, տալով նրան, սակայն, աւելի մատչելի ու դիւրը բռնելի ձև:

V

Ենթադրենք մի րօպէ, ասում է կասալը, թէ Գերմանիայում մի այնպիսի մի մեծ հրդեհ է պատահել, որ այրվել ոչնչացել են մեր երկրի սահմանադրութեան բոլոր օրինակները և մենք ստիպված ենք նորից սահմանադրութիւն մշակել: Ենթադրենք, թէ գերմանացիների մի մասը, նոր սահմանադրութիւն մշակելու ժամանակ, այլ ևս չուզենայ միապիտութեանը տալ այն գերքն ու իրաւունքները, ինչ նա ունէր սահմանադրութիւնը այրվելուց առաջ, կամ թէ չէ ուղղակի մտածէին վերջ զնել բոլորովին միապետութեանը և հանրապետութիւն հաստատել:

Հնարաւոր կը լինէր արդեօք այդ դիտաւորութիւնը իրագործել:

Ի հարկէ ոչ, որովհետև այդ ժամանակ թարշաւորը ամենանգիստ կերպով կասէր այդպէս մտածողներին.

«Գրաւոր սահմանադրութիւնը ոչնչացաւ, այո, բայց դա ի՞նչ նշանակութիւն ունի, քանի որ զօրքը իրապէս դարձեալ իմ կողմն է, ինձ է հպատակվում, և գնում ու անում է, ինչ որ ես եմ հրամայում նրան: Զինարանների և զօրանոցների հրամանատարները իրանց թնդանօթներով ու ամբողջ զօրքով միշտ պատրաստ են փողոց գուրս գալու և իմ ու միապետութեան իրաւունքները պաշտպանելու: Եւ յենքելով այդ իրական ոյժի վրա, ես պահանջում եմ ինձ տալ նոյն իրաւունքները, ինչ որ ունէի հրգեհից առաջ:»

Կը նշանակէ, թագաւորը, որին հպատակվում են զօրքն թնդանօթները, կազմում է սահմանադրութեան մի մասը: Այլ խօսքերով՝ քանի զօրքը այն սատիճան տգէտ ու անգիտակից կը լինի իր իսկական դասակարգային շահերին և հլու հնագանդ գործիք կը մնայ թագաւորի ու միապետութեան ձերքին, անհնարին կը լինի տապաւել միապետութիւնը և թագաւորին զրկել իր բացառիկ իրաւունքներից:

Կամ դիցուք, ժողովուրդը ասէր, «մենք, բոլոր պլուտուացիներս 18 միլիոն ենք, իսկ այդ 18 միլիոնից մի շատ չնչին մասն են կալուածատէր ազնւականները: Եկէք թոյլ չը տանք, որ սրանք գերակշիռ ազգեցութիւն ունենան մեր պիտական գործերի մէջ ու ոչնչացնենք ազնւականների առանձին ժողովը, որ նոյն իրաւունքներն ունի, ինչ որ ամբողջ ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցիչների ժողովը:»

Տարակոյս չը կայ, որ խոչոր կալուածատէր-ազնւականները չէին կարողանայ, իրանց իրաւունքները պաշտպաններու համար, իրանց զիւղացիներին դուրս բերել փողոց:

Ընդհակառակը, նրանց զիւղաւոր հոգսը, երկի, կը լինէր ամենից առաջ հէնց իրանց զիւղացիների ձեռքից փախչել:

Բայց խոչոր հոգատէր-ազնւականները միշտ մեծ ազգայից առաջ հէնց իրանց զիւղացիների ձեռքից փախչել: Կամ դիցութիւն են ունեցել թագաւորի ու արքունիքի վրա և, այդ պղեցութեան շնորհով, նրանք նոյնպիսի հեշտութեամբ կօգտվէին զօրքի ու թնդանօթների ծառայութիւնից, ինչ պէս որ օգտվում է հէնց ինքը թագաւորը, քանի որ նա էլ ամբողջ ազգութիւնը կամ ազգութիւնը ազնւականն է, ինչպէս և միւսները:

Այսպէս, ուրեմն, ազնւականութիւնն էլ գերմանական սահմանադրութեան մի մասն է կազմում:

Ենթադրենք այժմ հակառակ դրութիւնը. դիցուք, հրգեհից յետոյ թագաւորն ու ազնւականութիւնը ցանկանային վերականգնել Գերմանիայի հինգ գրաւոր սահմանադրութիւնից առաջ եղած ֆէօղալական կարգերը, այսինքն այն միջնադարիան սահմանադրութիւնը, որի ժամանակ ամբողջ պետութեան տէր ու տիրականը կալուածատէր ազնւականութիւնն ու հոգեորականութիւնն էին հանդիմանում, և երբ կապիտալիզմը, խօսը գործարանական ու մեքենական արդիւուգործութիւնը, միանգաման կաշկանդական ված լինելով զանազան ճորտատիրական ու էսնաֆական կարգերով ու օրէնքներով, բոլորովին հնարաւորութիւն չունէր ազատ կերպով զարգանալու և իր ուղած ծաւալն ու թուիչը ընդունելու:

հ՞նչ էք իւարծում, կը յաջողվէր թագաւորին ու ազնւաշանութեանը այդ «երանալի» ժամանակներին վերադառնալ:

Ի հարկէ ոչ, որովհետեւ, չը կարողանալով այդ կարգերի տակ այլևս իրանց գոյութիւնը պահպանել ու շարունակել, այժմեան բոլոր մեծ ու փոքր գործարանները ստիպված կը լինէին իրանց գործարանները փակել և փողոցում թողնել տասնեակ ու հարիւր հազարաւոր բանուրներին: Մինչև իսկ երկաթուղիներն էլ ստիպված պիտի լինէին կանգ առնել, որովհետեւ վաճառականութեան անսովոր ու նրա վրա վատ աչքով նայող հողատէր ազնւականը ուղարկի ու էջերի քարգաններով էլ է բաւականանում:

Էհ, ի՞նչ կր լինէր այդ բոլորի հետեանքը: Ո՞վ պիտի կերակրէր այդ հարիւր հազարաւոր անգործ ու քաղցած մնացած բանուրներին: Շատ պարզ է, որ նրանք բացարձակ կար կը յայտարարէն թագաւորի ու ազնւականութեան դէմ, իրանց գոյութիւնը պահպանելու համար: Իսկ նրանց ետեւ, անշուշտ, կանգնած կը լինէին բոլոր գործարաննատէրերն ու ամբողջ խոշոր բուրժուազիան, որոնք իրանց գըրամներով ու աղղեցութեամբ կը պաշտպանէին նրանց և ոյժ կը տային բորբոքված կաւին, որի մէջ ի՞նըը բուրժուազիան էլ նոյն չափ շահազգրգոված կը լինէր:

Ուրեմն, խոշոր արդիւնաբերողներն ու բանուրներն էլ սահմանադրութեան մի մասն են կազմում:

Հին, միջնադարնան կարգերը վերականգնելով, արդիւնագրծութեանն ու վաճառականութեանը վնասելով, շատ բնական է, որ շատ մեծ հարուած կը հասցվէր և բանկատէրին: Իսկ այդ պարագայում, թէկ ոչ մի ապստամբութիւն կարող է առաջ չը կար, բայց չէ որ թագաւորն ու իր նեցուկներից:

Ի՞նչպէս յայտի է, կառավարութիւնը իր պետական ծախսերի համար, ինչպիսին են՝ ահապին զօրաբանակներ, գաղտնի ու յայտնի ոստիկանական ու ժանդարմաներ, ոններ, զատարաններ, բանտեր և այլն, և այլն այդ կարգի

հաստատութիւններ պահելը, միշտ այնպիսի մեծ գրամական միջոցների կարիք է ունենում, որ նա անկարող է իր վերցրած հարկերով լրացնել: Այդ պատճառով էլ նա սկսում է իր ապագայ միջոցները ուտել, այսինքն՝ փոխառութիւններ է մնում բանկատէրերից և գրանց փոխարէն տէրունական թղթեր է տալիս նրանց: Ճիշտ է, ժամանակի ընթացքում այդ տէրունական թղթերի մեծ մասը կրկին ժողովրդի ունենոր գասակարգի ձեռքն է հաւաքվում, բայց դրա համար ժամանակ է հարկաւոր, շատ անգամ երկար ժամանակութիւնը երկար չէ կարող սպասել, նակ: Մինչդեռ կառավարութիւնը երկար չէ կարող սպասել, նրան էինց իսկոյն կամ կարճ ժամանակի ընթացքում է հարկաւոր փող գտնել: Իսկ մեծաքանակ գումարներ բանկատէրեր միայն կարող են տալ, որոնք իրանց տուած կատէրերը միայն կարող արժէթղթերը, փողի փոխարէն վերցնելով տէրունական արժէթղթերը, մկանում են նրանց քիչ-քիչ հասարակութեանը ծախել: Եւ որովհետեւ բուրժուազիան աշխարհում ոչ մի ձրի ծառայութիւն չունի, ուստի բանկատէրերն էլ իրանց ծառայութիւնը էժան չեն ծախում: Նրանք բորսաններում արուեստական կերպով բարձրացնում են տէրունական արուեստական կարգով իրանց համար ահազին շահ են վերցնում:

Սակայն մի երկրում, երբ կանգնած կը լինեն արդիւնագործութիւնն ու վաճառականութիւնը, ի՞նչպէս պիտի կարողանան բանկատէրերը իրանց վերցրած տէրունական արժէթղթերը յաջողութեամբ ու արագութեամբ սաղացնել: արժէթղթերը յաջողութեամբ, շատ պարզ է, որ նրանք չեն հանային պիտութեանը փոխառութիւն տալ և սա, ի հարկէ, սամայնի պիտութեանը փոխառութիւն տալ և սա, ի հարկէ, սամայն փողի, կը մնայ մի շատ անելանելի գրութեան մէջ:

Ահա հէնց այդ պատճառով էլ Բօտշիլդի ու Մինդեր սօնի նման բանկատէրերն էլ հանդերձ իրանց բորսայով, սահմանադրութեան մի մասն են կազմում:

Վերցնենք այժմ մի այլ պարագայ, ենթադրենք, որ կառավարութիւնը ցանկանալ կամ բոլորովին ոչնչացնել երկրում տիրապետող կրօնը, փակելով բոլոր եկեղեցիներն

ու աղօթատները, և կամ նբա փոխարէն մի այլ կրօն կամ պաշտամունք հաստատել:

Կամ, դիցուք, կառավարութիւնը որոշէր երկար տարիներից ի վեր զանազան քաղաքական ազատութիւնների արդէն վարժված ու ընտելացած ժողովրդին զրկել մասունի, խօսքի և այլ ազատութիւններից:

Կամ, վերջապէս, ենթադրենք թէ թագաւորն ու ազնւականները ցանկանային վերահաստատել ճորտային դրութիւնը, յայտարարելով, որ բուրժուազիան ու միւս բոլոր դասակարգերը այս օրվանից զրկվում են իրանց ազատութիւններից և պիտի ճորտեր ու հապատակներ դաւնան աղնաւականներին,

Ի՞նչ էր կարծում, ի՞նչ կը պատահէր այս վերջին երեք գէպերի ժամանակ էլ: Արդեօք շատ զինուորներ կը գտնվէին, որ կառավարութեանը պաշտպան հանդիսանային և ազատէին նրան ժողովրդի բարկութիւնից: Ոչ միայն զօրքը, այլ և հէնց աղնաւականներից շատերն էլ թագաւորի ու կառավարութեան գէմ զիուխ կը բարձրացնէին, եթէ նրանց կրօնին ու վայելած ազատութիւններին փորձէին ձեռք տալ:

Կը նշանակէ, ինչպէս նախորդ դլուխներում ասացինք, հասարակական գիտակցութիւնը, ժողովրդի մատառը զարգացման մակերեսոյթն ու նրա ոովորութիւններն էլ սահմանադրութեան մի մասն են կազմում:

Այս բոլորից յետոյ կարծում ենք, այլևս բոլորովին պարզ է, թէ ի՞նչ բան է իրական սահմանադրութիւնը, կամ թէ ի՞նչ իրական ոյժեր ու սրանց համաձայն դասակարւոր կամ իրաւական սահմանադրութիւն են մշակում:

Գրաւոր կամ իրստական սահմանովորութիւնը մշակելու ժողութեան այսինչերորդ մասն է կամ բուրժուազիան այնոր իրաքանչեր գասակարգին, իր ունեցած ոյժերի համա-

ձայն ու չափով, իրաւունքներ է տրվում պետութեան օրէնսդրական ու վարչական գործերը վարելու մէջ: Եթէ, որինակի հոմար, թագաւորը գեռ մնձ իրական ոյժ և կողմանակիցներ ունի երկրում, այլ խօսքերով՝ եթէ զեռ ևս այդ ոյժերին հակադիր իրական ոյժերը զեռ ևս բաւականաչափ զարգացած չեն, որպէսզի կարողանան նրան կամ բոլորով զին յաղթել և կամ չափազանց զիջող դարձնել, այն ժամանակ իրաւական սահմանադրութեամբ թագաւորին այնպիսի մեծ իրաւունքներ է տրվում, որպիսին չունի ամրող ժողովուրդը: Օրինակ՝ նրան է յանձնվում երկրի տմբողջ զօրքի վիխաւոր հրամանատարութիւնը, նրան է յանձնվում մինիստրներ նշանակելու, արձակելու կամ փոփոխելու իրաւունքը, նրան է վերապահվում պատգամաւորական ժողովի մշակած օրէնքների վերջնական հաստատումը և այլն, և այլն:

Ճիշտ նոյն ձեռվ են վարվում և միւս դասակարգերի օրէնսդրական ու վարչական իրաւասութեան սահմանները որոշելու ժամանակ: Այդտեղ էլ, ի հարկէ, չէ ասվում, թէ այսինչ կամ այսինչ դասակարգը այս կամ այն իրաւունքներն ու պարտականութիւններն ունի: Այդ իրաւունքների պարտականութիւնների չափն ու սահմանները ինքնըստ ինքեան որոշվում են այն հանգամանքից, թէ իրաքանչիւր զասակարգին մրպիսի թւով ներկայացուցիչներ ունենալու ժողուակարգին ժրպիսի ժրպութիւնները ունենալու կրաւութիւնների մէջ է տրվում օրէնսդրական ժողովում: Խսկ այդ բանը միանգամայն կախված է գրաւոր սահմանադրութիւնը մշամունքունը:

Հէնց որպէսզի իրաւական կամ գրաւոր սահմանադրութիւն մշակողները անարդարութիւն ու աշառութիւն չը գործեն, որպէսզի հնարաւորութիւն լինի ամենայն ճշտութեամբ որոշել, թէ երկրի մէջ գործող իրական ոյժերը ի՞նչ չափով և ի՞նչ աստիճանի են զարգացել, որպիսի նոր յարաքերութիւնների մէջ են գտնվում նրանք, և թէ, վերջապէս, ի՞նչ չափով պիտի կատարել իրաքանչիւր գասակարգի մշակում է, այդ բոլորի համար, իրաւասութեան սահմանաւորումը, այդ բոլորի համար, ասում ենք, ամենալաւ միջոցն է համարվում գումարել

սահմանադիր ժաղով ընտրողական քառանդամ ֆօրմուլայի հիման վրա և այդ ժողովին յանձնել նոր սահմանադրութիւն մշակելու գործը: Եւ որչափ սահմանադիր ժողովի ընտրութիւնները աղատութեամբ, առանց բռնի միջոցների կամ խարդախութիւնների կատարվեն \*), այնչափ էլ գրաւոր սահմանադրութիւնը աւելի համապատասխան կը լինի իրական սահմանադրութեանը:

Երբէք չը պէտք է ենթագրել, թէ քառանդամ և ամենազատ կերպով կատարված ընտրութիւնները այնպիսի պատգամաւորներ կուղարկեն սահմանադիր ժողով, որոնք ամենաընդարձակ և ումկավարական սահմանադրութիւն կը մշակեն: Բոլորովին ոչ: Ինչպէս վերեւում տեսանք, իրաւական, գրաւոր սահմանադրութիւնը երբէք չէ կարող աւելին լինել, քան իրական սահմանադրութիւնը: Եթէ, օրինակի համար, երկրի իրական ոյժերը դեռ ևս աղնւականութեան կամ խոշոր բուրգուազիայի կողմն են, ընտրված պատգամաւորների մեծամասնութիւնն էլ սահմանադիր ժողովում աղնւականների կամ բուրգուազիայի կողմանակեցները կը լինեն, հետևապէս նրանց մշակած սահմանադրութիւնն էլ այդ պասկարգերի համար աւելի նպաստաւոր կը լինի: Դրան իբրև ապացոյց, մենք կարող ենք այստեղ յիշել, որ մերի ժամանակ փորձեցին հասարակապետութիւն և մինչեւ սօցիալիստական համայնապետութիւն՝ կօմունիզմ նեցան, որովհետեւ այն ժամանակվան ֆրանսիայի իրական բակապետութեան, էլ չենք ասում սօցիալիզմի, համար, և նազրութեանը, Այդ պատճառով էլ թէ հասարակապետութիւնը և թէ Պարիզի կօմունան (համայնապետութիւնը) չուտով ընկան և երկրի իրաւական սահմանադրութիւնը:

\*) Այդ խարդախութիւնների մասին տես իմ կազմած բրօշիւը.

թիւնը, այսպէս ասած՝ հաւասարակշութեան մէջ մտաւ իրական սահմանադրութեան հետ:

VI.

Նախորդ զլիսում մեր տուած բացատրութիւններից շետոյ, այլիս ըոլորովին պարզ ու հասկանալի է, թէ ինչո՞ւ մի որևէ երկրի իրաւական սահմանադրութիւնը չէ կարելի պատուաստել մի այլ երկրի վրա, եթէ այս վերջինի իրական սահմանադրութիւնը, նրա մէջ զարգացած իրական ոյժերն ու սրանց յարաբերութիւնները բոլորովին առընթեր ուն չեն համապատասխանում առաջինի իրական սահմանադրութեանը:

Մեր տուած բացատրութիւններից յետոյ, նոյնպէս շատ հասկանալի պիտի լինի, թէ ինչո՞ւ վիտաշ-Դուբնօվօյի շիմած գրաւոր սահմանադրութիւնը, որ լոյս տեսաւ Փետական Դուման բացվելու նախօրեակին, չը զոհացրեց Ռուսաստանի ժողովրդին ու չը վերականգնեց նրա խաղաղութիւնն ու անդորրութիւնը:

Բացի գրանից, մեր այս բոլոր ասածներից յետոյ, այժմ նմանապէս շատ պարզ պիտի լինի և ներկայ Ռուսաստանի անշշխանական ու փոթորկալից կացութիւննը, երբ ամբողջ, երկիրը կարծէք մի վիթխարի հրդեհով է րոնկած:

Եւ յիրաւի, մենք վերեւում մի շատ անհաւատալի ենթադրութիւն արեցինք, ասելով, թէ թոյլ տանք մի բոպէ, որ երկրում մի այնպիսի մեծ հրդեհ է պատահել, որ օր երկրում մի այնպիսի մեծ հրդեհ է պատահել որինակներն ու գրաւոր սահմանադրութեան բոլոր պատճէնները այրվել ոչնչացել են: Դա, ի հարկէ, մի շատ բռնապքոսիկ ենթադրութիւն կարող թւալ առաջին անգամից, որովհետեւ միանգամայն անէր թւալ առաջին անգամից, որին անպատճառ հէնց օրէնսդրական գրանպիսի հրդեհ է այն էլ մի երեակայել մի այնպիսի մեծ հրդեհ և այն էլ մի գրանպիսի հրդեհ, որին անպատճառ հէնց օրէնսդրական գրաքերը ճարակ դառնային: Բայց, իրապէս, այդպիսի հրդեհ վերը ճարակ դառնային: Բայց, իրապէս այդպիսի հրդեհ գոխութիւնն է, և այդ հրդեհը երկրի մէջ կատարվող յեղապատահում է:

Յեղափոխութեան ժամանակ նախկին, երկար տարի-

ներով գոյութիւն և ոյժ ունեցող սահմանադրութիւնը, լինի դա իրական թէ զրաւոր, այդ միենոյն է, այլես չէ ճանաչվում: Նոր իրական ոյժերն ու նրանց յարաբերութիւնները արդէն այն աստիճանի փոխված են, որ այլս նրանք բոլորովին չեն համապատասխանում գոյութիւն ունեցող իրաւուկան սահմանադրութեանը: Եւ երբ նորի ու հնի մէջ պատերազմը արդէն սկսված է, երբ նոր իրական ոյժերը այլես հին իրաւուկան սահմանադրութիւնը չեն ճանաչում ու նորն են պահանջում, այդ միենոյն է, թէ հին սահմանադրութիւնը կրակի մէջ այրվել ոչնչացել է: Եւ ինչպէս որ այրված բանը անհնարին է վերականգնել, այնպէս էլ միանգամայն անհնարին է, յիդափոխութիւնից յետոյ նորից վերականգնել նախկին սահմանադրութիւնը, նախկին կառավարչական կարգերն ու րէժիմը:

Հէնց այդ է պատճառը, որ ներկայումս Ռուսաստանի հասարակական ու պետական գործիչներից և ոչ ոք, նոյն իսկ աստղային պալատում, չէ էլ մտածում թէ հնարաւոր պիտի լինի մեղնում նորից հին բռնապետական բէժիմը վերականգնել: Հասարակական ու պետական գործիչներից լուրջ մտածողները այդ բէժիմը անդառնալի կերպով անցած են համարում: Ամենամեծ հարցը այժմ նրա մէջ է կայանում, որ փոքր ի շատէ ճշտութեամբ կարողանան որոշել նոր զարգացած ու հասունացած իրական սահմանադրութիւնը՝ նոր ու հին իրական ոյժերի ու նրանց մէջ պէսզի նրանց համաձայն էլ մշակեն նոր իրաւուկան: գրաւոր սահմանադրութիւնը:

Ի՞նչպէս վերևում ասացինք, իրաւուկան սահմանադրութիւնը մշակելու ժամանակ իրաբանչիւր դասակարգ աշճայն իրաւունքներ ստանալ պետութեան մէջ: Այժմ, ուտանում որ դասակարգը և ի՞նչ չափով իրական ոյժեր ունի:

ոյժերը և թուլացած կամ անզօր դարձած հները: Մի կողմից՝ զօրքի վերին աստիճանի հաւատարմութիւնը միապետական բիւրոկրատիային առիթ է տալիս սրան և միապետական ազնւականութեանը, խոշոր բուրժուազիային ու հոգեորսկանութեանը վատահութեամբ ասելու, թէ իրական մեծ ոյժերը գեռ իրանց կողմն են, ուստի և պետական գործերի գերակշիռ իրաւունքները իրանց պիտի շարունակեն պատկանել: Իսկ միւս կողմից՝ ամբողջ ժողովրդի յամառ ու երկար գիմազլութիւնը ապացուցանում է, որ միջին և մանը բուրժուազիան (քաղաքային և գիւղական) ու պրոլետարիատն էլ ոչ պակաս իրական ոյժեր ունեն իրանց կողմը: Այս վերջին հանգամանքի մէջ համոզված է, ի հարկէ, և ինքը բիւրոկրատիան, ստկայն, օգտվելով այնպիսի մի ամենակարենը ու զօրաւոր իրական ոյժից, ինչպիսին է զօրքը, ամեն կերպ աշխատում է իր գիրը ամուր պահպանել և շատ չնչին զիջումներով դարձեալ պետութեան դեկը իր ձեռքումը պահել:

Յեղափոխական շարժումների սկիզբներում, երբ կառավարութեանը մի ժամանակ այնպէս թւաց թէ զօրքը արդէն չէ հպատակվում իրան, կամ աւելի ձիշտ է ասել, անթաղթեց, որ զօրքը, եապօնական պատերազմի խայնա ենթաղթեց, որ կրած տանջանքներից յետոյ, տառակ պարտութիւններից ու կրած տանջանքներից յատ ամենայն իրաւումբ կարող է չը հպատակվել իրան, շատ աւելի մեծ զիջումներ անելու տրամադրութիւն ցոյց տուեց, աւելի մեծ զիջումների չափով հոկտեմբերի 17-ի որը և արտայայտվեց անցեալ տարվայ հոկտեմբերի մանիֆեստով:

Ստկայն, շատ քիչ ժամանակ դրանից անցած, նամանակող Անվանութիւնը Ռուսկայի ապատամբութիւնների ժամանակ, կառավարութիւնը հասկացու, որ ինքը սիսալժամանակ, կառավարութիւնը հասկացու, որ կարելի է այդ սասին ենթաղթել: ցած ստրուկն է, քան կարելի էր այդ սասին ենթաղթել: Եւ այդ բանի մէջ համոզված օրից, բիւրոկրատիան սկսեց աւելի ու աւելի խրոխտանալ և յետ կանգնել իր տուածխոստումներից:

Այդ բանին շատ նպաստեց և մի այլ հանգամանք:  
Խոշոր և միջակ բուրժուազիան, որը մինչև հոկտեմբերի  
17-ը մեծ համակրութեամբ էր վերաբերվում ու աջակցու-  
թիւն էր ցոյց տալիս յեղափոխութեան առաջաւոր գունդը  
կազմող պրօլետարիատին, տեսնելով սրա չափազանց յան-  
դուգն ընթացքը և վախենալով նրա չափազանց մեծ պա-  
հանջներից, յանկարծ սարսափած կանդ առաւ ուերես դար-  
ձրեց նրանից: Այդ հանգամանքից, ի հարկէ, իսկոյն օգ-  
տվեց կառավարութիւնը և սկսեց մի կողմից՝ բուրժուա-  
զիայի հետ «սիլիբրիլի»-ներ սարեիլ, իսկ միւս կողմից՝ իր  
դիրքը աւելի և ամրացնել: Ճիշտ այդ «սիլիբրիլի»-ների  
հետեանքն էր Պետական Դուման (այլ ոչ սահմանադիր ժո-  
ղով) և նամանաւանդ այն սահմանադրութիւնը, որ հէնց  
ինըը բիւրօկրատիան շտապեց թխել Պետական Դումայի  
նախօրեակին:

Բիւրօկրատիայի կազմած այդ սահմանադրութիւնը,  
միանգայն չը համապատասխանելով երկրի ներկայ ի-  
րական ոյժերին ու նրանց յարաբերութիւններին, ինչպէս  
և պէտք էր սպասել, չը կարողոցաւ հաւասարակշռութիւն  
ստցնել տիրող դասակարգերի: ու նրանց արած պահանջների  
միջև: Եւ նա յայտնից նոյնչափ անբաւարար ու անպէտք,  
ինչպէս արդէն յայտնիլ էր նախկին բռնապետական րէ-  
ժիմի օրով գոյութիւն ունեցող իրական սահմանադրութիւնը:

Հին ու նոր բէժիմների միջն պատերազմը ամենայն  
կատարութեամբ դեռ շարունակվում է: Եւ նա կը շարու-  
ւական սահմանադրութիւն, որը չամասկ մի իրա-  
ու ձևած լինի երկրի իրական սահմանադրութեան վրա:  
Այդ պատերազմը՝ այս յօդուածի առաջին գլխում յիշված  
միջուկի և կեղեւի կոիւն է. ձուի մէջ ձագուկը զարգացել  
մեծացել է և իրան համապատասխան ծաւալ և օդ է փնտ-  
ում, իսկ կեղեւը դեռ ամուր է, նա չէ կուրպում ձագուկի  
կացահարութիւնից և սպասում է նրան խեղել: Զագուկը  
Ռուսաստանի նոր զարգացած իրական ոյժերն ու նրանց

նոր յարաբերութիւններն են, իսկ կեղեւը այն իրաւական  
սահմանադրութիւնն է, որ հէնց ինքը միապետական բիւ-  
րօկրատիան հապճեպով կազմեց:

Ինչպէս վերևում ասացինք, մի երկրի իրաւական սահ-  
մանադրութիւնը լաւ և ձատութեամբ որոշելու ու նրա հա-  
մապատասխան էլ իրաւական սահմանադրութիւն մշակելու  
միակ ամենալաւ և ամենասարդար միջոցը սահմանադիր  
ժողով հրաւերելն է: Ենթագրում ենք, որ վերջի վ վերջոյ  
հէնց այդպէս էլ լինելու է Ռուսաստանում, թէ բիւրօ-  
ւական սաստիկ սարսափում է սահմանադիր ժողովից:  
Սակայն վատահութեամբ կարող ենք ասել, որ եթէ կառա-  
վարութիւնը սրանից մի տարի առաջ համաձայնէլ սահմա-  
վարութիւնը սրանից մի տարի առաջ համաձայնէր սահմա-  
վարութիւնը հրաւերելու, շատ աւելի քիչ իրաւունքներից  
նադիր ժողով հրաւերելու, շատ եթէ այդպիսի մի ժողով հրաւերվի  
կը զրկվէր ինըը, քան եթէ այդպիսի մի ժողով հրաւերվի  
այժմ, կամ նամանաւանդ աւելի ուշ, երբ ժողովրդի ու  
զօրքի դիտակցութիւնը աւելի զարգացած կը լինի և բիւրօ-  
ւորքի դիտակցութիւնը աւելի զարգացած կը լինի և բիւրօ-  
ւական կը զրկվի և այն միակ իրան նեցուկ մնացած  
կրատիան կը զրկվի և այն միակ իրան նա գեռ շարունակում է  
իրական ոյժից, որի զօրութեամբ նա գեռ շարունակում է  
իրուստալ:

Իսկ երբ իրաւական սահմանադրութիւնը հաւասարա-  
կշռութեան մէջ կը դրվի երկրի իրաւական սահմանադրու-  
թեան հետ, անա այն ժամանակ միայն յեղափոխութիւնը  
գաղար կը ստանայ Ռուսաստանում և երկիրը կը մտնի  
խաղաղ առաջադիմութեան, էվոլյուցիայի շրջանի մէջ: Եւ  
խաղաղ դրութիւնը կը շարունակվի մինչև որ երկրում  
այդ խաղաղ դրութիւնը կը շարունակն այլ՝ նոր իրական ոյժեր, կը ստեղծվին նոր  
կը զարգանան այլ՝ նոր իրական ոյժեր, կը զարգանան այլ՝  
յարաբերութիւններ ու գրանց շնորհով նորից իրաւական սահ-  
մանադրութիւնը անհամապատասխան կը զարնայ իր կեղեւը  
կազմող իրաւական, իրաւական սահմանադրութեանը և նորից  
կազմող իրաւական, իրաւական սահմանադրութեանը և նորից  
հարեւաշնակութեան մէջ դնել նոր իրական ոյժերի հետ:

VII

Այժմ մենք գիտենք, թէ ի՞նչ քան է սահմանադրու-  
թիւնը: Գիտենք, որ իրական սահմանադրութիւն միշտ եղել

է և կայ ամեն մի կազմակերպված պետութեան մէջ։ Գիւ-  
տեսք, որ իրաւական կամ գրաւոր սահմանադրութիւնը  
սկսել է կեանքի մէջ մտնել և սովորութիւն գառնալ ֆրան-  
սիական մեծ յեղափոխութիւնից յետոյ միայն, այսինքն, երբ  
արդիւնագործութիւնն ու կապիտալիզմն են զարգանում և  
բուրժուազիայի թագաւորութիւնն է սկսվում։ Գիտենք  
նոյնպէս, թէ ինչպիսի նոր իրական ոյժեր են առաջ գալիս  
արդիւնագործութեան ու կապիտալիզմի զարգացումով,  
ինչպիսի դասաւորութիւններ են ընդունում նրանք զանա-  
զան դասակարգերի միջև, ինչպիսի նոր յարաբերութիւններ  
են ստեղծվում և թէ ինչպէս այդ բոլորը պայմանաւորում  
և հարկ ու անհրաժեշտ են դարձնում իրաւական սահմա-  
նադրութիւնը փոփոխութիւնների ենթարկելու և նրան հա-  
մաձայնեցնելու կեանքի մէջ արդէն փոխված իրական սահ-  
մանադրութեան հետ։

Արդ՝ այս բոլորը մի որոշ չափով գիտնալուց և հաս-  
կանալուց յետոյ, Բնչպիսի իրաւական կաժ գրաւոր սահմա-  
նագրութիւն կարելի է սպասել մի այնպիսի երկրում,  
որտեղ դեռ չը կայ զարգացած արդիւնագործութիւն ու կա-  
պիտակիզմ, չըկայ բուրժուազիա ու սեփականագուրկ պրօ-  
լետարիատ: Իսկ ճիշտ հէսց այդպիսի մի երկիր է ներկա-  
յացնում իրանից Պարսկաստանը, որը երբ թէ ձգտում է  
այժմ, Ռուսաստանի և միւս քաղաքակիրթ երկրների նուան,  
գեմոկրատիկ, կամ, աւելի ճիշտ է ասել, բուրժուազական  
սահմանագրութիւն ձեռք բերել:

Տեղն է այստեղ ասել, որ այն բոլոր գեմօկրատիկ ազատութիւնները, ինչպէս օրինակ խօսքի, մամուլի, գումարումների, խղճի և այլն ազատութիւնները, որոնք արդի բուրժուազիան սահմանադրութիւնների զարգը և թագն ու պսակն են կազմում, միշտ հին սահմազետական ժամանակ-ներում, փէօդալական կարգերի օրով ոչ միայն գոյութիւն են ունեցել, այլ և նրանց սահմանափակումների մասին մարդիկ հասկացողութիւն էլ չեն ունեցել: Եւ յիրաւի, ինչպէս կարող էին մարդիկ դիցուք ցեսղուրայի և մամուլի

Դամ խօսքի սահմանափակութերի մասին մտածել, երբ գեռ  
խսկապէս մամուլ էլ գոյութիւն չունէր ներկայ իմաստով։  
Նոյնը կարելի է ասել և միւս ազատութիւնների սահմանա-  
փակութերի մասին։

Հէնց այդ է պատճառը, որ ներկայումս ֆէօդալական Պարսկաստանը իր այդ գեմօկրատիկ ազատութիւններով մի կատարեալ ասխական Շվէյցարիա է իրանից ներկայացնում։ Այստեղ գեռ համարհա թէ բոլորովին չը կայ ոչ մի ցեն-գուրա, որովհետև կառավարութիւնը շատ լաւ գիտէ, որ իր երկրում ոչ մի անհաճելի բան կը ող չէ կարող լինել և ոչ էլ կը վաճները կարդացող։ Պարսկաստանում ցենզուրայի գեր կատարողը ոչ թէ բռնապետական միապետութիւնն է, այլ աւելի հոգեռագանութիւնը, որը նամանաւանդ սաստիկ խիստ է մահմեղական շիռ գաւանանքից դուրս եկած այլ և այլ աղանդաւորների վերաբերեալ։

Պարսկաստանում կայ և գումարութերի կատարեալ  
ազատութիւն, որովհետև պարսիկ ժողովրդի միտինգները և  
այլ ժողովները տեղի են ունենում, լինի մզկիթներում, լինի  
հրապարակներում, միմիայն հոգեորականների ու զանազան  
մօլլաների կրօնական բովանդակութիւն ունեցող առասպե-  
շական հեքիաթները լսելու և աւելի ու աւելի բթանալու  
համար։ Կատարեալ ազատութիւն են վայելում և կրօնական  
պրօպագանդիստ-գերվիշները, որոնք տարին տասներկու  
ամիս զիւղից զիւղ և քաղաքից քաղաք են շրջում ու մի-  
միայն ֆանատիկոսութեան հուրն արծարծում առանց այն  
էլ սաստիկ ֆանատիկոս ժողովրդի մէջ։ Եւ շահի կառավա-  
րութեան մտքով անգամ չի անցնի այդ բոլորի համար  
արգելք գնել, քանի որ գրանք միանգամայն նպաստում են  
ֆէօդալական հին կարգերն ու սովորութիւնները անարա-  
տութեամբ պահելուն։

Պարսկաստանում դեռ չը կայ մինչև իսկ պասպորտային սիստէմ և մարդիկ ազատ են երկրի ներսում ամեն տեղ և ամեն ժամանակ լըջագայելու առանց որ և է անցագրի: Գոյութիւն ունի միայն արտասահմանեան անցագրի,

ուր պէտք է գալիս օտար երկրներում միան:

Ուրեմն, էլ թնչ գեմօկըատիկ ազատութիւնների մասին  
խօսք կարող է լինել Պարսկաստանում, երբ այդ ազատու-  
թիւնները արգեն գոյութիւն ունեն ու նրանց սահմանափա-  
կելու մասին դեռ ևս ոչ ոք չէ էլ մտածում: Եւ այդ մասին  
գեռ մտածող չը կայ հէնց այն պատճառով, որ այդ եր-  
կրում գեռ գոյութիւն չունեն այն դասակարգերը, որոնք,  
իրանց շահերով հակառակ լինելով հողատիրական ու ֆէօ-  
դալական կարգերին, գիտակցէին իրանց դասակարգային  
շահերը, կուր լայտարարէին այդ հնացած կարգերի դէմ:  
Մինչ այդ դասակարգերը չեն լինում, մինչ նրանց դասա-  
կարգային գիտակցութիւնը չէ զարգանում ու կուր չէ յայ-  
տարարվում, վերոյիշեալ ազատութիւնները սահմանափա-  
կելու մասին ոչ ոք չէ էլ մտածում: Իսկ այդ դասակարգերը՝  
բուրժուալիան և պրոլետարիատը, ինչպէս ասացինք, Պար-  
սկաստանում գեռ չը կան և այնտեղ մինչև օրս էլ գեռ այն  
հողատիրական ֆէօդալական կարգերն են թագաւորում, որ  
գոյութիւն ունեն միջին դարերում եւրօպական երկր-  
ներում:

Ուրեմն, ով ուժից և ինչ ազատութիւններ կարող է պահանջել Պարսկաստանում։ Միթէ դարերով ձնշված ու ստրկութեան հասած գիւղացիութիւնը հողատէր աղաներից Բայց չէ որ այս վերջինների մեծ մասը հէնց ինքը բարձր հոգեսրականութիւնն է, որի ազգեցութեան տակ է գտնվում ամբողջապէս գիւղացիութիւնը։ Բացի զընից, ի՞ր է տեսնված, որ գիւղացիութիւնը յեղափոխութեան նախաձեռնողը հանդիսանայ ու նրա առաջաւոր գունդը ներկայացնէ։ Նա միշտ և առեն տեղ բուրժուազիայի և պլուտոարիատի եւ ակից է զնացել իսկ Պարսկաստանում ոչ մէկը կայ և ոչ միւսը։

Բնդհակառակը, ինչպէս արդէն լաւ յայտնի է, Պարսկաստանի ներկայ «ազատագրական» շարժումների՝ գլուխը կանգնած են հէնց իրանք հողատէր աղաները, յանձին բարձր հոգեսրականութեան և խոշոր վաճառականների ու ռազ-

ուազների», որոնք միևնոյն ժամանակ և ամենամեծ կալ-  
ուածատէրերն են: Բայց միթէ սրանք այնչափ ձանձրացել  
ու զգել են իրանց կատարած բռնակալութիւններից, «ը  
այժմ ցանկանում են վերջ դնել նրանց և աղատութիւններ,  
օրէնք և արդարութիւն պարգևել իրանց զոհերին: Դա, իս-  
կապէս, շատ տարօրինակ կը վնէր:

Ճիշտ է, պատմութեան մէջ եղել են այսպիսի դէպրոց  
ու երկրներ, որտեղ հողատէր ազնւականութեան մի մասը  
յեղափոխութեան կողմանակից է հանդիսացել ինչպէս օրի-  
նակ, Անգլիայում, Ֆրանսիայում, Ետալոնիայում, Ռուսաս-  
տանում և այլն, բայց դա եղել է միշտ այն պարագանե-  
րում, երբ հողատէր աղնւականը կամ միենոյն ժամանակ  
արդինագործ կոպիտապլիստ է եղել, որի շահերը, իրեն  
կապիտալիստի, աւելի գերակշիռ նշանակութիւն են ունեցել,  
քան իրեն հողատիրոջ, և կամ, երբ յեղափոխութիւը այն-  
չափ զարգացած ու առաջ է գնացած լինում, որ հողատէր  
ազնւականները այլ են անձարացած յեղափոխութեան կող-  
մի են անցել:

Պարսկաստանում այդպիսի բան էլ չը կայ:

Ահա հէսց գրա մէջն է ամենամեծ հարցը և խնդիր  
անհասկանալի կողմբ: Սակայն այդ հանգոյցն էլ շատ հէշտ  
լուծելի է գառնում, եթէ փոքր ինչ մօտիկից ենք ծանօթա-  
նում այդ երկար արդի տնտեսական վիճակի և զործող ի-  
րական ոլժերի հետ:

VIII

Պարսկաստանում, ասացինք, արդիւնագործութիւն չը

կայ, սակայն, վաղուց է արդէն, որ եւրօպական արդիւնագործութեան բազմատեսակ ապրանքները մուտք են գործել այդ երկիրը ու տակն ու վրա արել նրա տնտեսական զրութիւնը: Պարսկաստանի նախկին ձեռագործ արհեստներից շատերը վաղուց արդէն ոչնչացել են, իսկ մնացածներն էլ նետքնետէ ոչնչանալու ճանապարհի վրա են. նրանք հաղորդակցութեան լաւ ճանապարհներին են սպասում, որ վերջնական հարուածը կրեն: Եւրօպական ապրանքների հետ չը կարողանալով մըցել, տեղական արհեստաւորները քայլացվում, սնանկանում են և կամ բոլորովին պրօլետարանում են, կամ թէ չէ՝ վաճառականութեամբ և այլ գործորով են զրադիւմ: Ժողովրդի պրօլետարացած մասը, երկի մէջ տեղական արդիւնագործութիւն չը գտնելով, գաղթում է Կովկաս, Հնդկաստան և այլ կողմեր, իր գլխի ճորը տեսնելու համար:

Եւրօպական արդիւնագործութեան ագրեցութեան տակ պրօլետարանում է կամ, աւելի ճիշտ է աւել, ապրուստի միջոցներից զըրկվում է և գիւղական երկրագործ տարրը, որովհետև եւրօպական ապրանքները փարթամացնում են հողատէր աղաների ու միայն կաշառով ապրող կառավարչական պաշտօնեաների և միւս բոլոր գիւղական ժողովրդի արիւն քրտինքով ապրող հաղար ու մի խանխաւանների կեանքը, կօմֆօրան ու շքեղապրուստը, և այդ պատճառով էլ այդ ձրիակեր աղաները, իրանց աւելի ու աւելի աճող պահանջներին ու ճոխ ապրուստին գոհացում տալու համար, աշխատում են գիւղացիների վերջին հիւթը քամել: Իսկ դժբաղս ժողովուրդը, Պարսկաստանի նման մի նահապետական և ապրելու ամենաէժան միջոցներ պարզեսող երկում չը կարողանալով իր վերջին ծայր սակաւալեա գլուխ պահել, նոյնակէս գաղթում և օտար երկիրներ է գնում:

Կեանքը փարթամանալով ու ճոխանալով, մեծանում է, ի հարկէ, և դրամի պահանջը: Բայց ո՞րտեղից գտնել զրամ, քանի որ Պարսկաստանը չունի սեփական կապիտալիզմ ու արդիւնագործութիւն: Այստեղ էլ խանխաւաններին ու մօլ-

լա-աղաներին եւրօպացիներն են օգնութեան հասնում իւրանց բանկերով: Բայց սրանք, ի հարկէ, դարձեալ էժան չեն ծախում իրանց ծառայութիւնները. նրանք ահազին վաշխառուական տոկոսներ են վերցընում:

Ինչպէս յայտնի է, Պարսկաստանում հողատէր աղաները, ինչպէս և կառավարութիւնը գիւղական ժողովրդից իրանց հասանելիք (?) տուրքը գեռ մթերքներով են ստանում: Եւ չունենալով հաղորդակցութեան ճանապարհներ, հաւաքած այդ մթերքները արտահանութիւն չեն գտնում: Կը նշանակէ՝ ամբողջ բերքը միմիայն ներքին շուկայում է սպառվում: Իսկ այդպիսի պարագաներում թէ բերրի տարիները և թէ մեծ քանակութեամբ տուրք վերցնելը կալուածատիրոջ համար մեծ նշանակութիւն չեն կարող ունենալ, քանի որ շատ բերք եղած ժամանակ, նա ստիպված է էժան ծախվել: Բայց չէ որ բերքի էժանութիւնը բոլորովին չէ կարող աղդել կալուածատիրոջ վերցրած դրամի տոկոսների վրա. Կտ չէ կարող բանկին, սառաֆին և կամ եւկոսների վրա. Կտ չէ կարող բանկին, սառաֆին և կամ եւրօպական ապրանքատիրոջը ասել. թէ որովհետև իր ցորենը այս տարի էժան է, ուստի ինքն էլ քիչ տոկոս և պակաս գին պիտի վըճարի: Եւ ահա, նահապետական կեանքում մեծացած և թատուծոյ ու մարգարէի խօսքը քարոզր պարսիկ հոգկորական կալուածատէրը իր ներքին բնագդով եւրօպական ամենակատարելագործված սպեկիւլատիվ միջոցներին է գիմում: Նա արուեստական կերպով միշտ թանգարնում է հացը, կատարեալ սով է ստեղծում երկրում, որպէսզի կարողանայ իր ցորենը լաւ գնով վաճառել: Այստեղի կառողանայ դժունը եւ դժունութիւններ, որոնք զից էլ ահա շարունակ ծափում են կապիտալիզմ, որ իրանց նախ և առաջ ուղղված են եւրօպացիների դէմ, որ իրանց ապրանքներով քայլացում են տեղական արհեստները ու իրանց կապիտալներով թանգութիւններ են գցում երկի մէջ, և ապա նըրանք ուղղված են շահի կառավարութեան դէմ, որը եւրօպացիներին երես է տալիս ու չէ պաշտպանում երկրի նահապետական հին ձեռերը գրանց նորամուծութիւններից

ու թոյլ է տալիս, որ նրանք առևտրական գործերով զբաղվեն Պարսկաստանում:

Ժողովրդի գժգոննութեանը միանում են և ֆէօդալ աղա-  
ները, որոնք զգում ու տեսնում են, որ եւրոպական կապի-  
տալիզմի ներմուծումով մի ինչ որ բան է կատարվում եր-  
կրի մէջ, որ հոգի նշանակութիւնը հետզհետէ ընկնում է ու  
նրան դրամը՝ խոշոր կապիտան է փոխարինում և որ այդ  
կապիտալի տէրերը ոչ թէ իրանք, այլ օտարներն են, այն-  
ինչ, նրանց հասկացողութեամբ, եթէ շահի կառավարութիւ-  
նը թոյլ չը վերաբերվէր ու այս և այն արտօնութիւնները  
չը տար եւրոպացիներին, այն ժամանակ իմադիրը բոլորովին  
այլ կերպարանք կը ստանար և հէնց իրանք՝ աղաները կը  
կարողանային եւրոպացիների դերը կատարել ու նրանց  
վասակների տէրը լինել:

Ֆէօղալ աղաներին միանում է և բարձր հոգեորակաց-  
նութիւնը, որը նախ հէնց ինքն էլ նոյն հողատէր աղան ու  
ֆէօղալն է և ապա նա վաղուց է ատմներ կրծտեցնում շա-  
հի կառավարութեան դէմ, որը մի յայտնի ժամանակից ի-  
վեր աշխատում է հոգեորականութեան գերակըշիո տղթե-  
ցութիւնը ոչնչացնել ու իր հեգեմօնեան հաստատել: Կառա-  
վարութեան ու հոգեորականութեան միջև եղած անտագօ-  
նիզմն ու մրցումը նամանաւանդ սկսում է զօրեղանալ ու  
զարգանալ այն օրվանից, երբ մի կողմից բարձր հոգեորա-  
կանութիւնը, թողնելով իր նախկին՝ մարգարեների աւտո-  
դած՝ սեփականազուրկ վիճակը, սկսում է կալուածներ ձեռք  
բերել ու մեծ հողատէր աղաներ գտնեալ, իսկ միւս կողմից  
միապետութիւնը, դրամի կարիքից ստիպված, աշխատում է  
կալուածատէրերի հաշվին հարստանալ ու նրանցից աւելի  
ու աւելի մեծ գումարներ դուրս քաշել ու իր միահեծանու-  
թիւնը հաստատել.

Պէտք է խմանալ, որ բոլոր երկրներում, պատմական այն շրջաննում, երբ սկսել է արդիւնագործութիւնն ու կապիտալիզմը նոր զարգանալ, զրանց հետ զուղընթացարար զարգացել է և միապետական կառավարութիւնը. սա, հետզ-

հետէ կրթնելով նոր ծագող բուրժուազիայի վրա, աշխատել է կամաց-կամաց թուլացնել Ֆէօդաների ոյժը և ինքը միտնեցած է ծան է դառել Երբ օտար արդիւնագործութիւնը սկսել է մըցել տեղականի հետ, կամ իր մըցումով սկսել է ոչնչացնել տեղական ձեռագործ արհեստները, ու երբ գրամի թագաւորութիւնն է սկսվել, այդ ժամանակ օհապետական կառավարութիւնը միշտ ամենաեռուսնուն միջոցներ է ձեռք առել իր տեղական արդիւնագործութիւնը ապահովելու արտաքին մըցումից և ամեն տեսակ գիւրութիւններ է տուել նրան արագութեամբ զարգանալու, Հարկան երկրների տնտեսական ու տերիտորիական նւաճումներից իր երկիրը ապահովելու համար, միապետութիւնը ստուգել է կանոնադրական աւելի ու լաւ դիսցիպլինայի հնդթարկվող զօրք, զինված աւելի ու աւելի կատարելազործված զէնքերով, հաստատել է ընդդատակ մաքսային սխատէմը, ծագող արդիւնագործութեան համար զանազան արտօնութիւններ է ստուգել և այլն: Ճիշտ ծանանակ ու նոյն նպատակների համար է, որ միապետական կառավարութիւնը մի առանձին նոգատարութիւն է ցոյց տուել դէպի ժողովրդի կրթութիւնը: Այդ վիրթիւն է ցոյց տուել դէպի ժողովրդի կրթութիւնը: Այդ վիրթիւն է ցոյց տուել դէպի ժողովրդի կրթութիւնը:

Այդպէս է եղել առում ենք, այս բոլոր ուրիշ ուրիշ պրոնք իրանց արդիւնագործութիւնն ու բուրժուազիան են ունեցել: Իսկ սեփական արդիւնագործութիւնից զուրկ երկները միշտ մի ընդարձակ շուկայ են դառնում օտարների համար, չը կարողանալով միևնոյն ժամանակ մի կազմակերպված ու զօրաւոր կտավարութիւն ստեղծել, որը, մնալով միշտ թոյլ ու տիկար, շարունակ խաղալիք է դառնում աւելի զօրաւոր պետութիւնների ձեռքին: Այս վերջիններին էլ, ի հարկէ, չափազանց ձեռնառու լինելով այդ հանգամանքը, նրանք էլ իրանց կողմից են միշտ աշխատում, որ այդ կարնանը էլ իրանց կողմից են միշտ աշխատում միշտ թոյլ ու անօդնական գի եղկաների կառավարութիւնը միշտ թոյլ ու անօդնական

մնայ, որպէսզի իրանց ուզածի պէս վարվեն նրա հետ:

Ճիշտ այդպիսի երկրներից է և Պարսկաստանը: Նա, չունենալով իր սեփական արդիւնագործութիւնն ու կապիտալիզմը, եւրօպական ապրանքների համար մի կատարեալ շուկայ լինելուց զատ, այժմ սկսել է և եւրօպական կապիտալների շուկայ դառնալ. հիւսիսից Ռուսաստանը, իսկ հարաւից Անգլիան արդէն ճանապարհներ են շինում, որից յետոյ, անշուշտ, իրանց ձեռքը կը գցեն և տեղական արդիւնագործութիւնը: Այդ ժամանակ պարսից, առանց այն էլ անուանական, անկախ պետութիւնը բոլովովին կը կորցնի իր նշանակութիւնը և կը դառնայ նոյնը եւրօպացիների համար, ինչ եգիպտոսն է այսօր Անգլիայի համար: Արդ, ինչ կարող է շահի կառավարութիւնը անել, այդ բնական ու անխուսափելի դժբախտութեան առաջը առնելու համար: Դրա համար, ինչպէս ասսցինք, ամենից առաջ անհրաժեշտ է, որ միապետութիւնը բաւականին զօրեղացած լինի: Բայց ինչպէս կարող է զօրեղանալ միապետութիւնը, երբ երկրում ըստ կայ բուրժուազիա, իսկ ֆէօդալական խանխավանների համար, նամանաւանդ երբ սըրանց մեծ մասը հէնց բարձր հոգեռականութիւնից է կազմված, բոլորովին ձեռնուու չէ միապետութեան զօրեղանալը, և նրանք ամեն կերպ աշխատում են էլ աւելի թուլացնել նրան ու իրանց հեգեմոնեան հաստատել: Կալուածատէր ֆէօդալ տղաներին ձեռնուու ըստ լինելով միապետութեան զօրեղանալը, միենոյն ժամանակ նրանք շատ լաւ զգում ու հասկանում են, որ իրանց հարազատ երկրի հարստութիւնները հետզետէ «անհաւատ» եւրօպացիների ձեռքն են անցնում: Արանք կուղենային որ թէ այդ «գերազատութիւնը» տեղի չունենար և թէ միապետութիւնը իր այժմեան թոյլ վիճակում մնար: Ահա հէնց այդ ցնորքն է, որ այսօր նրանց մզում է դէպի այն՝ իր թէ աղատագրական շարժումները, որոնց իմաստը չըմբռնելով, օտարներն էլ կարծեցին, թէ պարսիկ ժողովուրդն էլ սահմանադրութիւն պահանջում:

IX

Ոչ դա բոլորովին այն շարժումը չէ. ինչ որ Ռուսաստանին է. մինչ այստեղ զարգացած տեղական բուրժուազիան ու իր անբաժան զաւակ պլրօկտարիատը մաքառում են չափազանց զօրեղացած բիւրօկրատիական միապետութեան և նրան դաշնակից ու ստրուկ դաշնած հին ֆէօդալիզմի մնացորդների դէմ, այստեղ՝ Պարսկաստանում դեռ չափազանց ուժեղ ֆէօդալներն են մաքառում դրսից ներմուծվող եւրօպական կապիտալիզմի դէմ, մտածելով՝ եթէ շահի կառավարութիւնը անընդունակ է կամ չէ ցանկանում հայրենիքը այդ «գերազատութիւնից» ֆրկել, թող ուրեմն նա կառավարութեան դեկը իրանց՝ ֆէօդալների ձեռքը յանձնի:

Սահմանադրութիւն ասելով, պարսիկ կալուածատէրը, հասկանում է Պարսկաստանը Մուհամէդի զաւակների համար և որ երկրի կառավարողներն ու իշխողները լինեն զլիսաւրաբար մեծ մարզարէի օրէնքներն և կանօնները հասկացողներն ու բացատրողները: Ահա հէնց այդ է Պարսկաստանի ներկայ «սահմանադրական» ու «ազատազրական» շարժումների ամբողջ իմաստն ու խորհուրդը, և հէնց զրահամար է, որ մենք այդ շարժումները համարում ենք մի շատ մեծ ըէակցիօն երկոյթ, որից մի լաւ բան երբէք չէ կարելի սպազել:

Սա, իր ներքին իմաստով, նոյն շարուժմն է, ինչ որ սրանից 7—8 տարի առաջ տեղի ունեցաւ Զինաստանում, որ կոչվում էր բօքսերների շարժում: Տարբերութիւնը այն է միայն, որ Զինաստանում կառավարութիւնն էլ ներքուստ կողմնակից էր բօքսերներին, խրախուսում էր նրանց, և այդ պատճառով շարժումներն էլ բացարձակ կերպով ուղղված էին եւրօպացիների դէմ: Իսկ այստեղ, Պարսկաստանում, կառավարութիւնը եւրօպական նորմուծութիւնների կողմնակից լինելով, շարժումներն էլ հէնց իրան կառավարութեան դէմ են ուղղված և «ազատազրական» ու «սահմանադրական» պատշաճաւոր բառերի տակ են թագնված:

Պարսից հոգևորականութիւնն ու խանխաւանները շատ վաղուց է, ինչ ատամներ էին կրծաեցնում եւրօպացիների ու նրանց ներմուծած նորութիւնննրի դէմ ու յաճախ ժողովրդի գլուխը անցած խլրտումներ էին յարուցանում երկրում, պահանջնելով շահի կառավարութիւնից, որ սա գուրս վնատէ եւբաղացիներին ու մաքրէ երկիրը նրանց ներմուծած նորութիւններից: Ո՞ւմ յայտնի չեն այն ահազին խոռվութիւնները, որ սրանից մի քանի տարի առաջ ծագեցին պարսից հոգևորականութեան ղեկավարութեամբ, երբ շահի կառավարութիւնը, իր օր ըստ օրէ առող կարիքների համար փող ձեռք բերելու նպատակով, փորձեց թուրթունի մօնօպջա հաստատել, հարկային սիստէմ և եկամուտի այլ աղբիւրներ ստեղծել: Ո՞ւմ յայտնի չեն նոյնպէս այն ահազին դժուարութիւններն ու խոչընդոտները, որոնց հանդիպեց շահի կառավարութիւնը, երբ նա մաքսային ու պօստի վարչական գործերը կաշառակերութեան, գողութեան ու աւագակութեան սովորած զանազան սէրիդներից ու խանխաւաններից լոլելով, բելգիայիներին յանձնեց:

Այդ զասի սահմանազրութիւնը դեռ ձեռք չը բերված, հոգևորականութիւնը կարողացաւ արգէն այս տարվայ ընթացքում մաքսատան ու պօստատան քրիստոնեայ ծառայողներից շատերին վոնդել տալ ու նրանց պեղը նորից կաշառակեր պարսիկներով լցնել: Իսկ երբ «սահմանազրութիւնը» ստացվի և հոգևորականութեան հեղեմօնիան հաստատվի, բոլորովին չենք կասկածում, որ առաջին գործը մաքսատան ու պօստատան ամրող վարչական մասը բելգիացիներից խլելը պիտի լինի, որից յետոյ կը սկսվեն և այլ ունաճութիւններ դէպի եւրօպացիները ու հալածանըներ ընդդէմ...հայերի, որոնք մոլեռանդ պարսիկների աչքում նոյնպէս եւրօպացիներ են համարվում, կամ, աւելի ճիշտ է առել, եւրօպացիները հայեր են համարվում, որովհետեւ եւրօպացիներին նրանք շատ անգամ «էրմանի» են կոչում:

Ահաւասիկ այդպիսի ապագայ ապատութեան ու սահմանազրութեան համար էին պարսկահպատակ հայերը առ

մեն աեղ ցնծութիւն ու մաղթանքներ կատարում:»

Ֆէօդալական կարգերով ապրող ու մահմեղական մոլեսանդութեամբ տոգորված տղէտ կալուածատէրերը ցանկանում են պարզապէս պատմութեան և իրերի ընդհաննուր զարգացման անխւնը կանգնեցնել ու չինական պարիսպներով շրջապատել Պարսկաստանը: Նրանք չափազանց ոգեսրվեցին Եապօնիայի օրինակով, առանց հասկանալու, որ Եապօնիան վաղուց արդէն դադարել է ֆէօդալական երկիր լինելուց, և նա իր կատարած հրաշքներով պարտական է միմիայն և միմիայն իր՝ խիստ արագութեամբ զարգացած կապիտալիզմին ու բուրժուազիային: Պարսիկ ֆէօդալները անկարող են ըմբռնելու, որ եապօնական հրաշքներ գործելու համար, անհրաժեշտ է ամենից առաջ դրամ ունենալ, իսկ մատեղից վերցնել զրամը, երբ երկրում չը կայ արդիւնագործութիւն, չը կայ կապիտալիզմ: Կաղմակերպված պետութեան մեծաքանակ ծախսերը կիսաճորտ գիւղացիներից հաւաքած հում մթերքներով չեն կատարվում, երբ նամանաւանդ ֆէօդալներից ամեն մէկը աշխատում է այդ մթերքները նէնց իր ամբարում կուտակել և կենտրոնական կառավարութեանը ոչինչ չը տալ:

Ոչ, կրկնում ենք, Պարսկաստանի շարժումները երբէք պէտք է շփոթել մուսաստանի իրապէս ազատագրական շարժումների հետ: Դրանք միմեանցից բոլորովին տարբեր մնաւորութիւն են կրում: Ոչչափ այս վերջինը, հետեանք լինելով մուսաստանում զարգացած նոր իրական ոյժերի ու գրանց համաձայն ստեղծված նոր յարաբերութիւնների, առջազդիմական, պլոգրեսիվ է, այնչափ էլ առաջինը, զուրկ ունաճութիւնների տեղական նոր իրական ոյժերից ու յարաբերութիւններից, միանգամայն անօրմալ ու յետադիմական շարժիւններից, միանգամայն աւելորդ ու անտեղի էր այն ժում է, ուստի և միանգամայն աւելորդ ու անտեղի էր այն ամրող ոգեսրութիւնը, որ ցոյց տուեցին Պարսկաստանի ամբողջ ոգեսրութիւնը, որ ցոյց տուեցին Պարսկաստանի հպատակները այդ շարժումների, թէկ ժումանակաւոր, աջող ելքի համար:

Ինչպէս որ ամեն մի փայլող առարկայ չը պէտք է

ոսկու տեղ ընդունել, այնպէս էլ ամեն մի ժողովրդային շաբթում չը պէտք է իբրև մի ազատագրական ու առաջա-դիմական երեսյթ ընդունել: Կալուածատէր խանախաւան-ների ու հոգեորականութեան միջոցով չէ, որ Պարսկաստա-նի չափազանց տանջվաց ժողովուրդը սահմանադրական կարգեր պիտի ստանայ: Այդ կարող է լինել միմիայն ըուր-ժուազիայի ու պրօլետարիատի զարգացման օրով: Իսկ եթէ զանազան հանգամանքների շնորհով անհնարին է տեղական կապիտալիզմի զարգացումը, այդ թերի մնացած պակասը կը լրացնի երօպական բուրժուազիան, և Պարսկաց փէօդալ-ների ու բարձր հոգեորականութեան բոլոր տագնապալից ջանքերն ու արուեստական խոշնդուաները անզօր կը հան-դիսանան իրերի ընթացքի այդ բնական ու զօրաւոր հոսան-քի առաջը առնելու:



«Ազգային գրադարան»



NL0219253

35.151